

4.2.1 ԱՅԲՈՒԲԵՆՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ԱՐԴԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից գիտության մեջ տարածված է այն տեսակետը, թե աշխարհի հնագույն այբուբենական գիրը հիքսոսյան (պրոտո-սինայական) գիրն է, որից ծագել է փյունիկյան այբուբենը և վերջինից՝ աշխարհի գրեթե բոլոր այբուբենական գրերը (արամեերեն, հունարեն, դեվանագարի, մոնղոլական և այլն), այդ թվում մաշտոցյան այբուբենը:

Հետազոտողների մեծ մասը հիքսոսյան և փյունիկյան այբուբեններին վերագրում են 22-ական գրանշան և համարում սեմական բաղաձայնային գիր: Ստորև կտեսնենք, որ համենայն դեպս հիքսոսյան այբուբենի պարագայում, այդպես չէ:

Հիքսոսյան, փյունիկյան և հունական այբուբենական գրանշանները, որոնք համարվում են աշխարհի մնացած այբուբենների ծնողը, բերված են ստորև, Սյունիքի ժայռափոր նշանագրերի հետ համեմատության մեջ (տես աղյուսակ 6):

Աղյուսակ 6. Սյունիքի վերին նոր քարի դարի նշանագրերի և հիքսոսյան, փյունիկյան, հունական այբուբենական գրերի համեմատական աղյուսակ:

	Սյունիք Վերին հին քարի դար	Հիքսոսյան Ք.ա. XVIIIդ	Փյունիկյան Ք.ա. XIIIդ	Արամեական Ք.ա. IXդ	Հունական Ք.ա. VIIդ
1					A
2					B
3					Γ
4					Δ
5					E
6					Ϝ ϝ Y
7					Z
8					H
9					Θ
10					I
11					K
12					Λ
13					M
14					N
15					Ξ
16					O
17					Π
18					Μ
19					Ϙ ϙ
20					P
21					Σ
22					T

Աղյուսակում հիքսոսյան և փյունիկյան այբուբենների համար բերված են այժմ ընդունված գրանշանների ցուցակները:

Երեք այբուբենների և Սյունիքի ժայռափոր նշանագրերի համեմատությունից բխում են հետևյալ կարևոր եզրակացությունները.

- Հիքսոսյան, փյունիկյան և հունական այբուբենական գրերի բոլոր նմուշները և նրանց տարատեսակները առկա են Սյունիքի ժայռապատկերներում: Եթե հիշյալ այբուբենական գրերը գործածության մեջ են մտցվել միջին բրոնզի դարից մինչև վաղ երկաթի դար ընկած ժամանակահատվածում, ապա Սյունիքի ժայռապատկերները փորագրվել են վերին հին քարի դարում¹ և Հայաստանի տարածքում անընդհատ գործածվել են մինչև միջնադար (տես հավելված 3): Հետևաբար աշխարհի հնագույն գաղափարագիր գրային համակարգ հանդիսացող Սյունիքի ժայռափոր նշանագրերն առնվազն 10.000 տարով ավելի հին են և հենց նրանք են այբուբենական գրանշանների ծագման առաջնային օջախը: Սյունիքի գաղափարագիր նշանագրերն են որոշակի սկզբունքով (հավանաբար ակրոֆոնիայի սկզբունքով) դարձվել միահնչյուն ընթերցում ունեցող գրանշաններ: Անշուշտ բառային ընթերցումներ ունեցող նշանագրին միահնչյուն (այբուբենական) ընթերցում տալու պրոցեսը պիտի ընթանար գաղափարագրության լեզվի հայերենի դաշտում:
- Հիքսոսյան գրերից ծագած համարվող փյունիկյան և հունական գրանշանները տարբերվում են և իրարից, և հիքսոսյան համապատասխան գրանշաններից: Այս փաստը հիմք է տալիս կարծելու, որ փյունիկյան և հունական այբուբեններն անկախաբար ծագել են այն նախնական գրային համակարգից, որում այդ բոլոր գրանշաններն առկա են Սյունիքի նշանագրերից:

Այս վերջին կետը պարզաբանենք մի գրանշանի օրինակով: Փյունիկյան (Գ) և հունական (Α) ալեֆ գրանշանի նախատիպը համարվում է հիքսոսյան գրերում առկա ցլի գլխի պատկերը, իսկ վերջինիս նախատիպն էլ համարվում է ցլի գլուխ պատկերող եգիպտական հիերոգլիֆը: Վերջինիս համար վերծանված jH=«խոշոր եղջերավոր անասուն» ընթերցումը ոչ մի առնչություն (ոչ հնչյունական, ոչ իմաստային) չունի ալեֆ գրանշանի հետ:


Նախ վերստին նշենք, որ ցլի գլխի պատկերը հին աշխարհի գաղափարագիր գրային համակարգերում տարածված էր, որոնց հնագույն օրինակները Սյունիքի ժայռապատկերներում են և այնտեղից էլ տարածվել է հին աշխարհում:

Աղյուսակ 7. Ցլի գլուխ պատկերող նշանագիրը հին աշխարհում:

Սյունիք



Պոքտասար



Շումեր



Վերին հին քարի դար

(>15.000 տարի առաջ)

Պոքտասար (Gobekli Tepe)


Ք.ա. X÷IX հազարամյակներ

Ուրուկ IV (ZATU 234)

Ք.ա. 3400÷3100թթ

¹ . H. Martirosyan, The Dating of Syunik Petroglyphs, 2015

https://www.academia.edu/19143026/THE_DATING_OF_SYUNIK_PETROGLYPHS

Եգիպտոս	 	Ուրուկ III (ZATU 234) Ք.ա. 3100÷2900թթ
Եվրոպա	 	Նաքադա II, Նաքադա III Ք.ա. 3500÷3150թթ
Կիլիկիա		Եգիպտական հիերոգլիֆներ Ք.ա. III÷ I հազարամյակներ Վինչա մշակույթ Ք.ա. VI÷V հազարամյակներ Լուվիական հիերոգլիֆներ Ք.ա. II÷I հազարամյակներ

Այս տվյալները ևս ցույց են տալիս, որ ցլի գլխի պատկերը, որպես գաղափարագիր, ծագել և նախապես գործածվել է Հայաստանի տարածքում (Սյունիք, Պորտասար) և ապա տարածվել դեպի հարավ (Շումեր, Եգիպտոս) և արեւմուտք (Եվրոպա): Ձևավորված գաղափարագրությունը քաղաքակրթական առաջնային օջախից՝ Հայաստանից, դուրս են բերում առաջին երկրագործ-անասնապահերը մոտ 11.000 տարի առաջ: Սրանք են, որ խոշոր գետերի (Տիգրիս և Եփրատ, Նեղոս, Դանուբ, Ինդոս և այլն) հովիտներում հիմնում են առաջին բնակավայրերը, որոնց շուրջ հետագայում ձևավորվում են շումերական, եգիպտական, դանուբյան, հարապպյան և մյուս երկրորդային քաղաքակրթական օջախները (տես նկար 8):



Նկար 8.

Հայաստանից բերված նշանագրերի հիման վրա հետագայում ծագում են.


- ❖ շումերական պատկերագրությունը Ստորին Միջագետքում, որը հետագայում (Ք.ա.~3000թ) սխեմատիզացվում և դարձվում է սեպագրություն (տես հավելված 1, 3):

- ❖ եգիպտական պատկերագրությունը, որի հիման վրա Ք.ա. ~3000թ ստեղծվում է եգիպտական հիերոգլիֆիկ գրային համակարգը (տես հավելված 2, 3):
- ❖ Միջին Եվրոպայում գործածվող դանուբյան կամ Վինչա մշակույթի (Ք.ա.~5000թ) նշանագրերը, որոնք սակայն չեն զարգանում և դասական գրային համակարգ չեն ձևավորում (տես հավելված 3):

Կիլիկիայից անմիջապես հարավ գտնվող Փյունիկիայի տարածքի բնակիչները Ք.ա. II հազ. տնտեսական և մշակութային սերտ կապեր են ունեցել Հայաստանի, Եգիպտոսի և Միջագետքի հետ: Իսկ գործածական գրերի վերաբերյալ հիշյալ տարածքներից մեկ հասած տվյալները վկայում են, որ ցլի գլխի պատկերը և **A** նշանագիրը զուգահեռ ու անկախ գործածություն և տարբեր իմաստներ են ունեցել:

Ըստ Ք.ա. IV հազ. շումերական պատկերագրության տվյալների, Շումերում գործածվել է ցլի գլուխ պատկերող երկու նշանագիր: Այդ նշանագրերից հետագայում առաջացել են GUD և GIR₃ սեպանշանները (տես աղյուսակ 8):

Աղյուսակ 8. Ցլի գլուխ և գլխատառ ալեֆ պատկերող նշանագրերը Շումերում:

Շումերական GUD նշանագիրը (ZATU 234)	Շումերական GIR ₃ նշանագիրը (ZATU 219)	Շումերական GADA նշանագիրը (ZATU 186)
 - Ուրուկ IV  - Ուրուկ III	 - Ուրուկ IV  - Ուրուկ III	 - Ուրուկ IV  - Ուրուկ III

Սրանցից GIR₃ սեպանշանի հիմնական իմաստներն են «զայրույթ, բարկություն» (աքքադ. *ezzu*) և «մեկի ազդեցության տակ լինել», «անձ», «ոտք, տեղափոխելը, ճանապարհ»: Սեպանշանի «զայրույթ, բարկություն» իմաստի և gir₁₃, gir₃, ger₃, gir_{u3} ընթերցումների դիմաց հայերենն ունի «*գիր» արմատը, որը գործածվում է կրկնական ձևով. **գրգիռ** = «բարկություն, զայրույթ, հակառակություն» (գիրգիր > գիրգիր > գրգիր): Նույն իմաստի և սեպանշանի HUS₂ = hu-uš = hu-uz₂ = huz ընթերցման դիմաց հայերեն **յոյգ**, **հուզ** - «խռովություն, իրարանցում, հուզմունք» արմատն է: Ցլի գլխի պատկերից առաջացած սեպանշանի այս իմաստն արտահայտել է վայրի ցուլի կատաղի բնավորությունը:

GIR₃ սեպանշանի իմաստների երկրորդ խմբի և kir₁₀, kir₁₅ ընթերցումների դիմաց հայերեն **կիր** = «մեկի ներգործությանը ենթարկվել; բնավորություն; կրել, տանել, տեղափոխել» արմատն է:

Շումերերենում բուն «ցուլ, կով» իմաստն արտահայտվել է GUD սեպանշանի միջոցով: Այս իմաստի համար GUD սեպանշանի բոլոր ընթերցումները ևս հայերենում ունեն իրենց զուգահեռները.

gu₄ = kov/gov = կով/գով = «տավար, կով (առանց սեռի խտրության, բարբառներում՝ «գով»)»

GUD=GU-UD =kuš-u₄ = gu-u₄ = kov/gov = կով/գով = «տավար, կով (առանց սեռի խտրության)»

bahar = պախրե, պախրայ = «տավար, ցուլ, արջառ, նախիր»

kamuš = KA-MUŠ = gu₃-muš = gumuš = գումեշ = «գումեշ»²

² . Հայերեն «տուար» և «կով» բառերին վերագրվում է հնդեվրոպական ծագում, իսկ «գումեշ» բառը փոխառություն է դրվում պաղավերեն gāvmēš-ից: Անշուշտ իրանցիներն են բառը վերցրել հայերենից, քանի որ «գումեշ» բառը տարածաշրջանում վկայված է իրանական ցեղերի հայտնվելուց ավելի քան 2000

dapar = տուար, դուար, տավար, դավար = «արջառ (ընդհանուր անուն կովի, ցուլի և այլն)» (սեպագրության մեջ գոյություն ունի b/p=w համարժեքություն):

Վերջապես Շումերում գործածված **A** նշանագրից ծագել է GADA սեպանշանը, որի հիմնական իմաստն է «վուշ, կտավ»: GADA սեպանշանի gada, gad, gadu, gat, kat, kut₂=«վուշ, կտավ» ընթերցումների հայերեն զուգահեռն է կուտ=«սերմ, հունդ, կորիզ» բառը (բարբառներում՝ կուտ, կուդ, գուդ, կոտ), որից էլ ծագել են կտալ=«վուշ բույսը, վուշից գործած կտորը» անվանումը (բարբառներում՝ կտավ, կդավ, գդավ, կտով, գոդով, գդով): Շումերերեն բառի վանկագրման հիմնական ձևն է

GADA = GA-DA = gu₁₁-ta₂ = guta = *կուտալ=կտավ:

Հայերեն «կտալ» բառը շումերերենից անցել է աքքադերենին (*kitû*), սրանից էլ՝ սեմական մյուս լեզուներին: Կտավը Հայաստանի էնդեմիկ բույսերից է, որի վայրի տեսակները օգտագործվել են դեռևս վերին հին քարի դարում: Երկրագործության տարածման հետ կտավը և նրա անվանումը տարածվել են Եվրոպայում և Ասիայում: Այլ լեզուներում բույսի անվանումները փոխառություններ են հայերենից: Այս նույն երևույթը տեսնում ենք նաև եգիպտական հիերոգլիֆիկ գրային համակարգում (տես աղյուսակ 9):

Աղյուսակ 9. Ցլի գլուխ և գլխատառ ավեֆ պատկերող նշանագրերը Եգիպտոսում:

Եգիպտական հիերոգլիֆը (F1, F2 - ըստ Ա. Գարդիների դասակարգման)	Եգիպտական հիերոգլիֆը (U6, U7 - ըստ Ա. Գարդիների դասակարգման)

Ցլի գլուխ պատկերող հիերոգլիֆների իմաստներն են.



=«կով, ցուլ» և =«կատաղի, կատաղություն, զայրույթ»,

որոնք համընկնում են նույն նշանագրերի համար շումերերենում գործածված իմաստների հետ: Եգիպտերենում «կով» իմաստը կրող բառերից է gw բառը, որ ճշգրիտ նույնական է հայերեն «կով» (բարբառներում՝ կով, գով, կուվ, գուվ, կավ) և շումերերեն gu₄ բառերի հետ gw = gow/guw/gaw = կով: Իսկ գլխատառ ավեֆի հետ նույնական հիերոգլիֆը ներկայացնում է բրիչի պատկեր և ունի mr ընթերցում: Վերջինս հայերեն բիր=«հող փորելու գործիք բառն է, որից՝ բրել=«փորել» (m հնչյունը =բու հիերոգլիֆի համար վերծանված ընթերցումն է):

Վերջապես, Հայաստանում ևս ցլի գլուխ և հունական գլխատառ ավեֆ (**A**) պատկերող նշանագրերը գործածվել են զուգահեռ և անկախ, սկսած վերին հին քարի

տարի առաջ: Համարվում է, թե պահլավերեն gāvmēš=«գումեշ» բառը կազմված է gao=«արջառ, կով» և maeša=«խոյ» բառերից և տառացի նշանակում է «կովախոյ»: Նույնիսկ միայն այս մեկնաբանությունն արդեն հուշում է, որ բառը հնարավոր չէ ստուգաբանել իրանական արմատներով, քանի որ գումեշը ոչ մի ընդհարություն չունի բրդոտ խոյի հետ: Գումեշն իր մագաժածկությով և միությունով նման է այծի:

Գումեշ անվանումը պիտի բացատրվի կով+մաշ(=այծ)=«կովայծ» (հմտ, Ղարաբաղի բարբառ.


կումաշ=«գումեշ»): Հայերենում մաշ=«այծ» բառը պահպանվել է բարդությունների մեջ, բայց լայնորեն

գործածվել է շումերական և հետագա սեպագրության շրջանում. → = maš = «այծ»: Խաչի նշանով «այծ» նշանակող բառ գաղափարագրելու հնարավորությունը նորից տալիս է միայն հայերենը, քանի որ միայն հայերենում են համանուն խաշ(ն)=«այծ, ոչխար» և «խաշ» բառերը:

դարից (Սյունիքի ժայռապատկերներ) մինչև միջնադար (Նշանագիրք իմաստնոց) (տես աղյուսակ 10):

Ինչպես տեսնում ենք աղյուսակում բերված տվյալներից, նշանագրերի միջնադարյան ցուցակներում ցլի գլուխ պատկերող նշանագիրը կրել է «ցուլ, կով» իմաստ, ինչպես շումերերենում և եգիպտերենում:

Աղյուսակ 10. Ցլի գլուխ և գլխատառ ալեֆ պատկերող նշանագրերը Սյունիքի ժայռապատկերներում և Նշանագիրք իմաստնոցում:

Սյունիքի ժայռապատկերներ	Նշանագիրք իմաստնոց	
	 = ցուլ	 հիքսոսյան
	 = երկյուղած  = երկուորեակներ	 փյունիկյան
	 = աթոռ	 հունական

Նշանագրի պառկած տարբերակը () կրել է զուարակ=«մեծ հորթ, ցլիկ, Յուլ համաստեղությունը» ընթերցում և իմաստ:

Ալեֆ տառանշանի նախատիպը հանդիսացող նշանագիրը, ինչպես Սյունիքի ժայռապատկերներում, այնպես էլ Նշանագիրք իմաստնոցում, ներկայացված է տարբեր դիրքերով (ուղիղ դիրքով-, պառկած դիրքով-, շրջված դիրքով-):

Նշանագիրք իմաստնոցում նշանագիրը ներկայացված է մի քանի տարատեսակներով և իմաստներով.

 = աթոռ,  = երկուորեակներ,  = անապատ,  = անասուն,  = բարեպաշտ,  = սեղան,  = եղբայր,  = երկյուղած,  = անարատ:

Արդյունքում կարող ենք պնդել, որ վերին հին քարի դարի Սյունիքում ծագած գրչական միջավայրից և անկախաբար են ծագել հիքսոսյան այբուբենի ցլի գլուխ պատկերող գրանշանը և փյունիկյան ալեֆ գրանշանը:

Բերված օրինակները նախ վկայում են, որ Սյունիքի գաղափարագիր նշանագրերը, մասնավորապես ցլի գլուխ և գլխատառ ալեֆ պատկերող նշանագրերը, տարածվել են գաղափարագրման լեզվի՝ Հայոց լեզվի հետ:

Երկրորդ՝ ցլի գլխի և գլխատառ ալեֆի պատկերները միշտ և ամենուր եղել են անկախ նշանագրեր: Փյունիկիայի բնակիչները քաջածանոթ լինելով եգիպտական հիերոգլիֆներին, անշուշտ գիտեին դա և ոչ մի հիմք չկա պնդելու, թե նրանք իրենց այբուբենի ալեֆ գրանշանի տեսքը բխեցրել են ցլի գլուխ պատկերող նշանագրից: Ի սկզբանե փյունիկեցիները կարող էին իրենց այբուբենի առաջին գրանշանի համար վերցնել եգիպտական ,  = «բրիչ» նշանագիրը: Մանավանդ, եթե հաշվի առնենք, որ եգիպտական հիերոգլիֆն ունի նաև «կատաղի, մարտական ցուլ» իմաստ:

Արդյունքում կարող ենք նաև պնդել, որ ժամանակակից հետազոտողների կողմից ներկայացվող հիքսոսյան այբուբենի «ցլի գլուխ» գրանշանից հրեական ալեֆ գրանշանին անցնելու ֆանտաստիկ ձևափոխությունը (տես աղյուսակ 11) անհիմն է, որի նպատակը այբուբենական գրի ծագումը սեմականացնելն է՝ հրեական ծագման տեսիլք ստեղծելն է:

Աղյուսակ 11. Հիքսոսյան այբուբենի «ցլի գլուխ» գրանշանի ենթադրյալ ձևափոխությունը փյունիկյան այբուբենի գրանշանին և հրեական ալեֆ գրանշանին:

	$\rightarrow$		$\rightarrow$	
Հիքսոսյան այբուբենի գրանշանը		Փյունիկյան այբուբենի գրանշանը		հրեական այբուբենի ալեֆ գրանշանը

Լեզվական տեսանկյունից այս խնդրին ժամանակին անդրադարձել է հայտնի լեզվաբան Վ. Գեորգիևը: Նախ ընդհանուր խնդրի մասին նա գրում է.

«Многие считают, что названия букв - это финикийские слова, т. е. названия предметов, обозначенных соответствующими финикийскими знаками. Другие же отрицают вообще какую либо общность этих названий с соответствующими знаками. В сущности эти названия не имеют семитского происхождения. Только некоторые из них народной этимологии были семитизированы. Это явствует из того факта, что одна часть этих названий не может быть истолкована с точки зрения семитских языков, а другая часть выглядит действительно как семитские слова, однако эти слова не имеют никакого отношения к соответствующим знакам»:³

Այնուհետև հեղինակն անդրադառնում է բոլոր գրանշանների և նրանց անվանումների համապատասխանությանը: Ալեֆ գրանշանի վերաբերյալ գրում է, թե «Alef значит по-еврейский «рогатый скот», «вол», но здесь нет полного соответствия финикийской букве, в которой только народная этимология видит стилизованную воловью голову с рогами»:⁴

Բերենք վերը մեր կատարած քննության արդյունքները հաստատող ևս մի օրինակ:

Հիքսոսյան արձանագրություններում բացակայում է շրջանի մեջ խաչ պատկերող () նշանագիրը և բնականաբար այն բացակայում է նաև հիքսոսյան այբուբենի գրանշանների ցուցակում: Սակայն այդ նշանագիրն առկա է փյունիկյան այբուբենում և վաղ հունարեն արձանագրություններում: Ըստ վերծանման արդյունքների, փյունիկյան այբուբենում այն ներկայացրել է t (tet) հնչյունը, իսկ վաղ հունարեն արձանագրություններում՝ Θ (theta) հնչյունը: Այս գրանշանը բացակայում է արամեական և հրեական այբուբեններում, ինչը կասկածի տակ է դնում այդ այբուբենների ծագումնաբանական կապը հիքսոսյան և փյունիկյան այբուբենների հետ:

Մինչ վերջերս տարածված էր այն մտացածին տեսակետը, թե $\text{t}=\text{tet}$ հնչյունը ներկայացնում է սեմական $\text{tab}=\text{«լավ, գեղեցիկ»}$ բառը: Տեսակետը մտացածին է, որովհետև հենվելով ակրոֆոնիայի սկզբունքի վրա, գտել են սեմական tab բառը, որի իմաստը համընկնում է եգիպտական $\text{ṯ}=\text{nfr}$ հիերոգլիֆի հիմնական իմաստի հետ և եզրակացրել, թե t հնչյունը ներկայացնող գրանշանը ծագել է $\text{ṯ}=\text{nfr}$ հիերոգլիֆից: Այս տեսակետը հնարողներն անտեսում են այն հարցը, թե այդ դեպքում ինչո՞ւ է գրանշանը կրում tet անվանում և ոչ թե tab անվանում: Վ. Գեորգիևն այս գրանշանի

³ . В. Георгиев, Происхождение алфавита, Вопросы языкознания, №5, 1952, ст. 49

⁴ . Նույն տեղում

անվան մասին գրում է. «tet не может быть объяснено как слово семитского происхождения»:⁵

Իսկ սա արդեն անհերթի ու կեղծ բացատրություն է, քանզի փյունիկյան, արամեական և հրեական այբուբենների tet գրանշանները (փյունիկյանը-⊕, արամեականը և հրեականը-⓪) իրենց գծագրությամբ ոչ մի ընդհանուր բան չունեն ոչ միայն եգիպտական ⓧ=nfr հիերոգլիֆի հետ, այլ նաև իրար հետ:

Այդ անհերթությունը իրենց հողվածում փորձեցին շտկել Օ. Գոլդվասսերն ու Հ. Նավեհը: Նրանք նախորդի փոխարեն առաջ քաշեցին նույնքան անհերթի մի այլ տեսակետ, ըստ որի, սեմական այբուբենների (արամեական և հրեական) tet գրանշանը ծագել է փյունիկյան tet գրանշանից: Նրանք ներկայացնում են ձևափոխությունների հետևյալ պատկերը (տես աղյուսակ 12):⁶

Աղյուսակ 12. Փյունիկյան այբուբենի tet գրանշանից արամեական և հրեական tet գրանշանների առաջացման ընթացքը, ըստ Օ. Գոլդվասսերի ու Հ. Նավեհի:

⊗ նշանագրի ձևափոխությունը փյունիկյան այբուբենում	արամեական այբուբեն	հրեական այբուբեն
ⓧ ⓧ ⓧ ⓧ	⓪ ⓪ ⓪	⓪ ⓪ ⓪

Ըստ հիշյալ հեղինակների, սկզբում փյունիկյան այբուբենում առաջանում է tet =⊕ գրանշան արագագիր տարբերակը (ⓧ, ⓧ), որը արամեական և հրեական այբուբեններում ստանում է ⓪ տեսքը, իսկ սա էլ ձևափոխվելով, դառնում է սեմական tet =⓪ գրանշանը: Որպես իրենց տեսակետի հիմնավորում, նրանք բերում են եգիպտական հիերոգլիֆների և նրանց արագագիր տարբերակը համարվող հիերատիկ գրերի ձևափոխության մի քանի օրինակներ: Հիերատիկ գրերին ստորև կանդրադառնանք և կտեսնենք, որ նրանք պահպանել են ծնող հիերոգլիֆի հիմնական գծագրության ձևը: Եղած բացառություններն ունեն իրենց բացատրությունները եգիպտական գրչության համակարգի ներսում:

Այս նոր տեսակետի թերությունը միայն համեմատվող գրանշանների ձևերի անհամատեղելի տարբերությունները չեն: Ինչպես ցլի գլուխ և գլխատառ ալեֆ պատկերող նշանագրերի դեպքում էր, այստեղ ևս գործ ունենք երկու տարբեր նշանագրերի հետ:

Փյունիկյան tet =⊕ գրանշանը և նրա ենթադրյալ ձևափոխված տարբերակը (⓪) ևս եղել են անկախ նշանագրեր, որոնց գործածությունը սկսվել է վերին հին քարի դարի Սյունիքի ժայռապատկերներից, հասել վաղ բրոնզի դար և գործածվել շումերական և եգիպտական պատկերագրության մեջ (տես աղյուսակ 13): Փյունիկյան tet =⊕ գրանշանի նախատիպը Սյունիքի ժայռապատկերների ամենագործածական նշանագրերից է: Այստեղ այն հանդես է գալիս երկու ձևով. շրջանի մեջ խաչ (⊕) և

⁵ . Նույն տեղում, էջ 50

⁶ . O. Goldwasser, J. Naveh, The Origin of the Tet-Symbol, Israel Exploration Journal, vol. 26, 1976, p. 15

քառանկյան մեջ խաչ ($\boxplus$): Նույն կերպ ($\oplus, \boxplus$) նշանագիրը շարունակում է գործածվել շումերական, եգիպտական և Վինչա մշակույթի պատկերագրության մեջ: Այն ողջ աշխարհով մեկ ամենատարածված նշանագրերից է:

Աղյուսակ 13. Հին աշխարհում $\oplus, \boxplus$ - նշանագրի գործածության հնագույն օրինակները:

Սյունիք	Շումեր	Եգիպտոս	Եվրոպա (Վինչա)

Նշանագիրը համանունության վրա հիմնված շատ ընթերցումներ ու իմաստներ է ունեցել, որոնցից շումերերենում անհամեմատ առավել գործածական է եղել «ընտանի այծ, ոչխար» իմաստը (աքքադ. *immeru*): Շումերերենում այս նշանագրից է ծագել LU = սեպանշանը, որը «ընտանի այծ, ոչխար» իմաստի համար ունեցել է *udu* և *eze* ընթերցումներ: Սրանցից առաջինը ներկայացնում է հայերեն օղի = *udu* = «ոչխար», իսկ երկրորդը՝ «այծ, էծ» բառը. այծ, էծ = *eze* = «այծ»: Այս իմաստի տեսանկյունից նշանագիրը ստանում է հետևյալ մեկնությունը. $\oplus, \boxplus$ = փակ տարածք ($\bigcirc, \square$) + այծ (+) = «ընտանի այծ»: Վերը նշել ենք, որ խաչի նշանով «այծ» նշանակող բառ գաղափարագրելու հնարավորությունը տալիս է հայերենը:

Հայաստանում այս նշանագրի գործածությունը ևս եղել է անընդհատ՝ վերին հին քարի դարից մինչև միջնադարյան Նշանագիրք իմաստնոց ($\otimes, \otimes, \boxplus$):

Սրան գուցա հեռ, Սյունիքի ժայռապատկերներում անկախաբար գործածվել է նաև Θ =theta գրանշանի նախատիպը ($\bigcirc, \Theta, \bigcirc$): Հետևաբար, այս կամ այն լեզվի համար այբուբեն ստեղծողը, ով անշուշտ ծանոթ էր Սյունիքի նախնական նշանագրերին, ըստ անհրաժեշտության կարող էր իր գրանշանի համար ընտրել $\oplus$ կամ Θ նշանագիրը և մեկը ձևափոխելով մյուսը ստանալու կարիքը չունենալ:

Օրինակ, հույներն իրենց Θ =theta հնչյունի համար սկզբում գործածում էին $\oplus$ նշանագիրը, որը հետագայում փոխարինվեց Θ, Θ նշանագրով (տես աղյուսակ 14):


Աղյուսակ 14. Θ =theta նշանագրի նմուշներ:

Սյունիքի ժայռապատկերներ	Լուվիական հիերոգլիֆներ	Հունական Θ =theta գիրը

Հունական Θ -ն $\theta\epsilon\acute{\upsilon}\varsigma$ (*theús*), $\theta\iota\acute{o}\varsigma$ (*thiós*) = «աստված» բառի առաջին հնչյունն է: Նույն նշանագիրը Կիլիկիայի տարածքում Ք.ա. ~XIV÷VII դդ գործածված հիերոգլիֆիկ

գրային համակարգում (հայտնի է լուվիական կամ անատոլիական հիերոգլիֆիկ գիր անվանումով, տես աղյուսակ 14) մինչ այդ գործածվում էր որպես «աստված» իմաստն արտահայտող ցուցիչ: Հույներն իրենց այբուբենը ստեղծելուց (Ք.ա. VIII դ. սկիզբ) հետո Θ հնչյունի համար ավելի կարևորելով θ «աստված» հունարեն բառի գոյությունը, ակրոֆոնիայի սկզբունքի համաձայն Θ հնչյունի համար նախապես վերցրած $\oplus$ նշանագիրը փոխարինել են Θ, θ նշանագրով:

Անիմաստ համարելով այբուբենական բոլոր գրանշանների համար այստեղ նման վերլուծություն կատարելը և բավարարվելով վերն ասվածով, պնդում եմ, որ միջին բրոնզի դարից մինչև վաղ երկաթի դար ընկած ժամանակահատվածում ստեղծված բոլոր այբուբենների հեղինակները անկախաբար օգտվել են վերին հին քարի դարի Սյունիքում ստեղծված և հետագայում աշխարհով մեկ տարածված գաղափարագիր նշանագրերի համակարգից (տես նկար):



Նկար 9. Գաղափարագրության և այբուբենների ծագման ժամանակագրությունը:

Այդ հեղինակները ծանոթանալով այբուբեն ստեղծելու գիտությանը, հետագայում նշանագրերի ընտրության հարցում գործել են ըստ իրենց հայեցողության և այն լեզվի թելադրանքով, որի համար ստեղծել են այբուբեն: Այս պրոցեսում մեծ դեր է խաղացել նաև այն տարածված պատկերացումը, թե նախնական նշանագրերի համակարգը

աստվածատուր է և բոլորը ձգտել են իրենց գրերը բխեցնել այդ համակարգից, որպեսզի դրանք ևս աստվածատուր կոչվեն:

Վերն ասվածը բացահայտում է նաև մի շատ կարևոր բացթողում, որ թույլ են տվել հին այբուբենների ծագումը հետազոտողները: Այս կամ այն նշանագիրը ձևափոխելու միջոցով այլ նշանագիր ստանալու և ամեն ինչ սեմականացնելու տենդով տառապող այս հետազոտողները, դիտմամբ կամ անգիտության պատճառով, մոռացության են մատնում այն փաստը, որ այբուբեններում առկա և իրենց կողմից քննարկվող գրանշաններն առկա են Սիրիայից մինչև Նեգև և մինչև Եգիպտոս տարածված ժայռապատկերներում:

Այդ ժայռապատկերները հետազոտողները (Հ. Ռոտերտ, Է. Անատի) հանգել են այն եզրակացության, որ դրանց հնագույն նմուշները (տես նկար 10) փորագրվել են վերին հին քարի դարի ավարտական փուլից մինչև Ք.ա. VIII հազ. ընկած ժամանակահատվածում:⁷ Այդ ժամանակ տարածաշրջանում սեմական տարր բացարձակապես գոյություն չունէր: Սեմականները Միջերկրական ծովի արեւելյան ափերին հայտնվում են այդ ժայռապատկերների փորագրումից 4-5 հազար տարի հետո:




Նկար 10. Վաղ նոր քարի դարի ժայռապատկերներ ժամանակակից Իսրայելի տարածքից:

⁷ . E. Anati, Palestine before the Hebrews, London, Jonathan Cape, 1963;

E. Anati, The Rock engravings of Dahthami wells in Central Arabia, Bolletino del Centro Camuno di Studi Preistorici, v. 5, 1970, pp. 99-158

Միջերկրական ծովի արեվելյան ափերի ժայռապատկերները հետազոտողները նշում են, որ տարածաշրջանում ժայռապատկերները հայտնվում են անասնապահության ու երկրագործության ձևավորման դարաշրջանում: Ինչպես նշել ենք, երկրագործությունը և անասնապահությունը Պաղեստին ու հարակից տարածքներ են բերել մոտ 11 հազար տարի առաջ Հայաստանից դուրս եկած երկրագործ-անասնապահներն ու նրանց սերունդները:

Միջերկրական ծովի արեվելյան ափերին և հյուսիսային Աֆրիկայում ժայռապատկերների տարածա-ժամանակային բաշխման պատկերը կրկնում է երկրագործ-անասնապահների տարածման ուղին:



Նկար 11. Հյուսիսային Աֆրիկայի⁸, Միջերկրական ծովի արևելյան ափերի ու Սյունիքի ժայռապատկերների հիմնական կուտակման վայրերը և տարիքները:

Այս ժայռապատկերները փորագրման տեխնիկայով և նշանագրերի կազմով վերին հին քարի դարում փորագրված Սյունիքի ժայռապատկերների կրկնակներն են և կտրուկ տարբերվում են տեղի բնակչության կողմից ավելի ուշ ժամանակներում փորագրված ժայռապատկերներից:

Ըստ Հ. Ռոտերտի և Է. Անատիի, պաղեստինյան ժայռապատկերների հաջորդ ոճին պատկանող խումբը փորագրվել է վաղ բրոնզի դարում (Ք.ա. IV հազ. երկրորդ կես ÷ III հազ. սկիզբ): Սա համապատասխանում է Հայաստանից վաղ բրոզեդարյան մշակույթի (Կուր-արաքսյան մշակույթ, Շենգավիթյան մշակույթ) տարածմանը: Ժայռապատկերների այս խումբը փորագրման տեխնիկայով և նշանագրերի կազմով չի տարբերվում նախորդից:

Սեմական հետքը տեսնում ենք միայն ժայռապատկերների երրորդ խմբում, որոնք, ըստ հիշյալ հեղինակների, փորագրվել են միջին երկաթի դարում (Ք.ա. 700÷200թթ),

⁸ . Հյուսիսային Աֆրիկայի ժայռապատկերների թվագրման մասին տես՝ J.-L. Le Quellec, Périodisation et chronologie des images rupestres du Sahara central, Préhistoires Méditerranéennes, 4, 2013; J.-L. Le Quellec, A new chronology for Saharan rock art, in "The World of Rock Art: An Overview of the Five Continents", Ed. B.L.Malla, 2013, p. 23

հիմնականում նաբաթեան ժամանակներում (Ք.ա. III-ІІ դդ): Այս խմբի ժայռապատկերները շատ պարզունակ են թե կատարման տեխնիկայի, թե նշանագրերի կազմի տեսանկյունից (տես նկար 12):

Բերված փաստերը մեզ հիմք են տալիս պնդելու, որ միջին բրոնզի դարաշրջանում և հետագայում ստեղծված այբուբենների գրանշանները, որպես գաղափարագրեր,



Նկար 12. Նաբաթեան ժամանակների ժայռապատկերներ, հին արաբերեն գրություններով:

Միջերկրական ծովի արեվելյան ափերում հայտնվել են վաղ նոր քարի դարի ժամանակներում և ոչ մի կապ չունեն սեմական ցեղերի հետ: Դրանք վերին հին քարի դարում Սյունիքում ստեղծված գաղափարագրերն են, որոնց ընթերցումները հիմնված են Հայոց լեզվի համանուն բառերի վրա:

Արդյունքում, ելնելով վերն ասվածից, մեր հետագա քննության հիմքում դնում ենք հետևյալ ամփոփիչ կետերը.


- ❖ Հին աշխարհի բոլոր այբուբենները ծագել են հիքսոսյան այբուբենից: Այսինքն, այբուբեն ստեղծելու սկզբունքն առաջինը հայտնագործել են հիքսոսները և կիրառել իրենց լեզվի համար:
- ❖ Հիքսոսյան այբուբենը (լեզվի հնչյունական համակարգը) և նրա գրանշանները ստեղծող հեղինակը գրանշանների ձևերը վերցրել է վերին հին քարի դարի Սյունիքում ստեղծված գաղափարագիր նշանագրերից (աստվածատուր գրերից), կիրառել է դրանք միահնչյուն գրանշան դարձնելու սկզբունքը (հավանաբար ակրոֆոնիայի սկզբունքը) և կառուցել հիքսոսյան այբուբենը:
- ❖ Սեմական հնագույն այբուբենները ստեղծվել են հիքսոսյան այբուբենից առնվազն 500 տարի հետո: Այբուբենական գրանշանների ստեղծման գործընթացում սեմական ցեղերը ոչ մի ներդրում չեն ունեցել: Նրանք օգտագործել են պատրաստի գրանշանները և հարմարեցրել իրենց լեզվին:

Սրանք վերցնելով, անցնենք մեր քննության հաջորդ թեմային:

4.2.2 ՀԻՔՍՈՍՅԱՆ ԱՅԲՈՒԲԵՆԻ ԳՐԱՆՇԱՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ

Հետազոտողները հիմք ընդունելով Մերձավոր Արեվելքի ժամանակակից ժողովրդագրական իրավիճակը, այն մեխանիկորեն արտապատկերել են Ք.ա. III-ІІ հազ. ընկած ժամանակաշրջանի վրա և սեմական միջավայրի հետ ոչ մի առնչություն չունեցող մշակութային (պաշտամունքային, ճարտարապետական, գրական, գրչության և այլն) շատ արժեքների վերագրել սեմական ծագում: Իրականում այդ ժամանակաշրջանում իրանական սարահարթից մինչև Միջերկրական ծով ընկած տարածաշրջանում սեմական տարրը համեմատաբար փոքր տոկոս էր կազմում և

առավելապես հայտնի էին իրենց ավազակային ու ավերիչ գործունեությամբ (տես նկար 13), իսկ մշակույթի ասպարեզում եղել են բնիկների ստեղծած մշակութային արժեքները յուրացնողի և սեփականացնողի դերում: Ք.ա. III÷II հազ. քաղաքակրթական արժեքները սեմականացնելու հիմնական պատճառներից մեկն էլ սեպագիր գրավոր աղբյուրների (հիմնականում աքքադերեն համարվող) սխալ ընթերցումներն են (բառեր, դիցանուններ, անձնանուններ, տեղանուններ և այլն):



Նկար 13. Միջագետքի քաղաքային բնակչությունը Ք.ա. IV÷II հազ.:⁹

I - Առաջին փուլը համապատասխանում է Շումերի պատմության Ուրուկյան փուլին (Ք.ա. 4100-2900թթ): Շումերի քաղաքների պատմությունը սկսվում է Հայ Աստծո պաշտամունքի կենտրոն Eridu-ի կառուցմամբ: Գրաֆիկը սկսվում է այն պահից, երբ Eridu-ի բնակչությունը հասնում է 10000 մարդու: Այս փուլում նկատվում ենք քաղաքային բնակչության անշեղ ու հաստատուն աճ: II - Շումերի պատմության վաղ դինաստիական շրջանն է (Ք.ա. 2900÷2400թթ), երբ Հայաստանի վաղ բրոնզի դարի մշակույթը սկսում է դրկորվել Շումերում: Նկատվում է քաղաքային բնակչության կտրուկ աճ: III - Շումերի քաղաքային բնակչության նվազման առաջին զգալի փուլն է և դասական Շումերի անկումը: Սա համապատասխանում է սեմական ցեղերի առաջին խոշորածավալ ներխուժմանը, որի արդյունքում Սարգոն Ա-ն Ք.ա. 2334թ հիմնում է աքքադական կայսրությունը: IV - Չորրորդ փուլը համապատասխանում է Հայաստանից Շումեր արշաված Guti-ների տիրապետության (Ք.ա. 2218-2047թթ) և Ուր III (Ք.ա. 2047-1940թթ) փուլերին: Սեմական ռազմական ներկայությունից ազատագրված Շումերում նորից քաղաքային բնակչության աճ է նկատվում: V - Նախորդ փուլը շատ կարճ է տևում, քանի որ հետևում է սեմական ծագումով ամորեական ռազմաշունչ քոչվոր ցեղերի երկրորդ խոշորածավալ ներխուժումը Միջագետք: Ք.ա. XVIIIդ վերջերին միավորելով ամորեական ցեղերին և հիմնվելով Աշշուրում, Շամշի Ադադ Ա-ն ստեղծում է հզոր բռնապետություն: Այս շրջանում Միջագետքի քաղաքային բնակչության թվաքանակը կտրուկ անկում է ապրում: Հետևում է Քաջանց (kassites) արշավանքը դեպի Միջագետք և հիքսոսների արշավանքը դեպի Եգիպտոս: VI - Քաջանց («կասիտներ») վերաբերյալ առաջին գրավոր հիշատակությունը գալիս է Համմուրապիի որդու՝ Սամսու-իլունայի (Ք.ա. 1749-1712թթ) թագավորության ժամանակներից: Երկարատև պատերազմական գործողություններից հետո «կասիտները» գրավում են Բաբելոնը և հիմնում Քաջանց («կասիտներ») թագավորական հարստությունը (Ք.ա. XVII÷XIIդդ): Մեր գրաֆիկի վրա դա համապատասխանում է Միջագետքի ավերված քաղաքների վերականգնման ու քաղաքային բնակչության աճի ժամանակաշրջանին:

⁹ . G. Modelski, World Cities, –3000 to 2000. Washington, D.C., Faros 2000, 2003

W. R. Thompson, Complexity, Diminishing Marginal Returns and Serial Mesopotamian Fragmentation, Journal of world-systems research, x, 3, fall 2004, pp. 613-652

Նկար 13-ում բերված պատկերը կրկնվում է նաև Պաղեստինում, երբ Արաբական թերակղզուց դուրս է գալիս սեմական ծագումով քոչվոր ցեղերի առաջին հզոր ալիքը: Հիմնավոր տեսակետ է հայտնվել, թե Կուր-արաքսյան մշակույթը կրողների քաղաքներն ավերվել են քոչվոր ամորեական ցեղերի ձեռքով:¹⁰ Տարածաշրջանի հնագիտական նյութերի հիման վրա վերականգնված պատկերն այսպիսին է.

«Ք.ա. 2300-2000թթ Պաղեստինում, ըստ էության, քաղաքային մշակույթի լիակատար անկման փուլ էր: Քաղաքային կյանքը վերացել էր, խոշոր բնակավայրերը լքվել, իսկ դրանց բնակչությունը հեռացել էր հեռավոր գյուղական վայրեր և տափաստաններ: Ընդ որում, կարևոր է արձանագրել, որ վաղ բրոնզեդարի վերջերին գոյություն ունեցած շուրջ 260 բնակավայրերից միջին բրոնզեդարում շարունակել են գոյատևել ընդամենը 79-ը»:¹¹ Այդ նույն ժամանակահատվածում եկվորները շուրջ 1000 բնակավայրեր են հիմնում, որոնց միջին մակերեսը կազմում էր կես հեկտար: Դրանք ժամանակավոր կացարաններով չամրացված գյուղակներ էին, որոնց բնակիչները զբաղվում էին քոչվոր անասնապահությամբ:

Այս պրոցեսների շրջանակում սեմականացվել են նաև հիքսոսյան այբուբենի ծագումը և նրա գրանշանների ենթադրյալ հնչյունական արժեքները:

Արդյունքում, հիքսոսյան գրանշանները և նրանցով արված արձանագրությունները հետազոտող գիտնականները հայտնվել են իրենց համար դրամատիկական, իսկ կողքից նայողի համար զավեշտալի իրավիճակում. նրանք առանձնացրել են որոշակի թվով գրանշաններ, նրանց վերագրել են սեմական լեզուներին յուրահատուկ հնչյունական արժեքներ (ընթերցումներ), սակայն այդ արձանագրություններից չեն կարողանում ընթերցել գոնե մի բառ:

Այս ասպարեզում աշխատող հետազոտողները մեկ դարից ավել տևած աշխատանքների արդյունքում դեռևս վերջնական լուծում չեն տվել ամենահիմնարար հարցին, թե քանի գրանշան է ունեցել հիքսոսյան այբուբենը: Իսկ գրանշանների ճշգրիտ ցուցակի առկայությունը տվյալ գրի վերծանմանն անհրաժեշտ նախապայմանն է:

Հիքսոսյան այբուբենի գրանշանների ցուցակի վերաբերյալ տվյալներն այսպիսին են.¹²

- ♣ Հիքսոսյան գրանշանների առաջին (20-րդ դարի սկիզբ) ցուցակը կազմել է Ա. Գարդիները, ով առանձնացրել է 32 գրանշան: Այստեղ միանգամից նշենք, որ չկա և չի եղել որևէ սեմական լեզու, որն ունենար 32 հնչյուն, առավել ևս 32 բաղաձայն (սեմական այբուբենները եղել են բաղաձայնային գրեր և ձայնավորների համար գրանշաններ չեն ունեցել):
- ♣ Հետագայում որոշ հետազոտողներ (Հ. Գրիմմե, Վ. Ստրուվե և այլք) գրանշանների թիվը նվազեցրին մինչև 20÷22-ի: Ակնհայտ է, որ Ա. Գարդիների առանձնացրած գրանշանների թիվը արհեստական ճանապարհով 10-ով փոքրացնելով, նրանք խնդիր էին դրել գրանշանների թիվը համապատասխանեցնել սեմական լեզուների բաղաձայն հնչյունների իրական քանակի հետ:
- ♣ Երբ հայտնաբերվեց ուգարիտյան սեպագիր այբուբենը (սրան կանդրադառնանք ստորև), այն համարվեց 30 բաղաձայն պարունակող գիր

¹⁰ . K. Kenyon, Excavations at Jericho, I, The Tombs Excavated in 1952-1954, London, 1960, p. 135ff

¹¹ . Ջ. Ահմարյան, Հայկական լեռնաշխարհը և Քանանը. վաղ շփումներ, Երևան, 2005, էջ 19

¹² . А. Лундин, Дешифровка протосинайского письма, Москва, 1991, ст. 21-24

և նորից վերագրվեց սեմական ծագում: Սրան մի կերպ բացատրություն տալու համար որոշ հետազոտողներ, որպես փրկության օղակ, առաջ քաշեցին տեսակետ, թե նախասեմական լեզուներն ունեցել են 27÷30 հնչյուն: Այս ֆոնի վրա Վ. Օլբրայթն առանձնացրեց 23 գրանշան և ենթադրեց, թե կան ևս 3÷4 նշաններ, որոնք վկայված չեն արձանագրություններում: Հետո Ա. Վան դեն Բրանդենն առանձնացրեց 25 գրանշան և նույնպես ենթադրեց, թե պիտի լինեն չվկայված ևս 3÷4 գրանշան:

- ♣ Կային նաև հետազոտողներ, ովքեր նշում էին, թե հիքսոսյան այբուբենի գրանշանների թիվն ավելի մեծ պիտի լինի: Մասնավորապես Ջ. Գարբինին գրում է, թե «գոյություն ունեն ևս 13 գրանշաններ, որոնք տարբեր են առանձնացված 23-ից (նկատի ունի Վ. Օլբրայթի կազմած ցուցակը - Հ. Մ.), որոնք դիտարկվում են որպես դրանց գծագրության տարբերակներ»:¹³

Այսինքն Ջ. Գարբինին ուղղակի նշում է, թե հիքսոսյան այբուբենի գրանշանները ցուցակները կազմողները գծագրությամբ տարբեր գրանշանները համարել են նույն գրանշանի գծագրության տարատեսակներ և արհեստականորեն նվազեցրել գրանշանների քանակը: Ստորև կտեսնենք, որ Ջ. Գարբինին ճիշտ է և դա արվել է գիտակցված, արվել է, որպեսզի գրանշանների քանակը համապատասխանեցվի սեմական լեզուների հնչյունների քանակին:

Վերը անվանապես նշված բոլոր հետազոտողները համարվում են այս ասպարեզի ճանաչված մասնագետներ և հեղինակություններ: Բերված տվյալներն էլ վկայում են, որ կամ բոլորն են սխալվում, քանզի նրանց ստացած արդյունքները հակասում են միմիանց, կամ էլ, լավագույն դեպքում ճիշտ է նրանցից մեկի տեսակետը:

Որոշ հետազոտողներ հրապարակել են հիքսոսյան այբուբենով գրառված արձանագրություններում առկա գրանշանների աղյուսակներ, որոնցում գրանշանները խմբավորված են ըստ նրանց գծագրության ենթադրյալ տարատեսակների: Հրապարակված բոլոր աղյուսակներում հիմնականում հիմք է ընդունվել Հ. Գրինմեի և Վ. Ստրուվեի առանձնացրած գրանշանների թիվը՝ 20÷22 գրանշան: Աղյուսակներում մնացած գրանշանները ներկայացվում են որպես դրանց գծագրության տարատեսակներ: Ժամանակին հենց այս փաստն է մատնացույց արել Ջ. Գարբինին, ում գնահատականից բխում է, թե հիքսոսյան այբուբենը պիտի ունենար 36 գրանշան:

Ջ. Գարբինին իր դիտողություններն արել Վ. Օլբրայթի կազմած աղյուսակի վերաբերյալ և մենք էլ սկսենք այդ աղյուսակում բերված տվյալների քննությամբ: Վ. Օլբրայթի կազմած գրանշանների ցուցակը բերված է նկար 14-ում:¹⁴ Հեղինակն առանձնացրել է նախասեմական լեզվի համար լեզվաբանների վերականգնած 27 հնչյունները (առաջին սյունակ): Հաջորդ սյունակում հեղինակը բերում է հիքսոսյան այբուբենի իր կողմից առանձնացված 23 գրանշանները: Վ. Օլբրայթը բերում է նաև գրանշանների սեմական անվանումներն ու իմաստները (վերջին երկու սյունակները) և այստեղ տեղին է հիշել Վ. Գեորգիեվի աշխատանքը, որում ժխտվում է գրանշանների պատկերների և այդ անվանումների կապը:

¹³ . G. Garbini, Storia e problemi dell'epigrafia semitica, Napoli 1979, G. Garbini, Introduzione all'epigrafia semitica, Brescia: Paideia, 2006

¹⁴ . W. Albright, The Proto-sinaitic inscriptions and their decipherment, Second printing, Cambridge, Harvard University press, 1969, p. 10, fig. 1

Թեև Վ. Օլբրայթն առանձնացված գրանշանների ցուցակում բերում է իր ժամանակին հայտնի ոչ բոլոր գրանշաններն ու նրանց տարատեսակները, այնուամենայնիվ նույնիսկ աղյուսակի հպանցիկ քննությունից նկատվում է, որ իրավացի է Ջ. Գարբինին

Phon. Value	Schematic Forms	Early North-west Semitic	Early South Semitic	Early Letter Names	Meaning of Names
ʾ	𐤀 𐤁	𐤀 (14th) 𐤁 (13th)	𐤀 𐤁 (Jamme)	ʾalp-	ox-head
b	𐤂 𐤃	𐤂 (17th) 𐤃 (13th)	𐤂	bêt-	house
g	𐤄	𐤄 (15th) 𐤅 (12th)	𐤄 𐤅	gaml-	throw-stick
d	𐤆 𐤇	𐤆 𐤇 (10th)	𐤆 (Jamme)	digg-	fish
ḏ	𐤈 𐤉	?	𐤈 𐤉 (Jamme)	?	?
h	𐤊 𐤋	𐤊 (10th)	𐤊	hê(?)	man calling
w	𐤌 𐤍	𐤌 (10th)	𐤌 (ʾused for y)	wô(waw)	mace
z	?	𐤎 (16th) 𐤏 (10th)	𐤎	zê(n-)	?
ḥ	𐤐 𐤑	𐤐 (12th) 𐤑 (10th)	𐤐	hê(t-)	fence(?)
b	𐤒 𐤓	?	𐤒 (Jamme)	ḥa()	hank of yarn
t	?	𐤔 (16th) 𐤕 (10th)	𐤔	tê(t-)	spindle?
y	𐤖 𐤗	𐤖 (13th) 𐤗 (10th)	𐤖 (orig. w)	yad-	arm
k	𐤘 𐤙	𐤘 (17th) 𐤙 (13th)	𐤘 𐤙	kapp-	palm
l	𐤛 𐤜 𐤝 𐤞	𐤛 (14th) 𐤜 (13th)	𐤛 𐤜 (Jamme)	lamd-	ox-goad
m	𐤟 𐤠 𐤡	𐤟 (15th) 𐤠 (13th)	𐤟 (9th) 𐤠 (8th)	mêm-	water
n	𐤢 𐤣 𐤤	𐤢 (14th) 𐤣 (12th)	𐤢 𐤣 𐤤	nahš-	snake
š	?	𐤥 (10th)	𐤥 𐤦	(šamk-?)	?
c	𐤧 𐤨	𐤧 (12th) 𐤨 (10th)	𐤧	cên-	eye
ḡ	𐤩	𐤩 (15th)	𐤩 𐤪 (Jamme)	ḡa()	?
p	𐤫 𐤬	𐤫 (10th)	𐤫 𐤬	piʾt-(?)	corner?
š/z	𐤮 𐤯	𐤮 (10th)	𐤮 𐤯	ša(d-)	plant
ḏ	?	?	𐤱	?	?
q	𐤳 𐤴	𐤳 (14th) 𐤴 (10th)	𐤳 𐤴 (Jamme)	qu(p-)	?
r	𐤶 𐤷	𐤶 (16th-14th)	𐤶 𐤷	naʾš-	head of man
š/t	𐤹	𐤹 (13th) 𐤺 (10th)	𐤹 𐤺	tann-	composite bow
š	𐤻 𐤼	?	𐤻 𐤼 (Jamme)	?	?
t	+	𐤽 𐤾 (13th)	𐤽 𐤾 (Jamme)	tô(taw)	owner's mark

Նկար 14. Վ. Օլբրայթի կազմած գրանշանների ցուցակը:

Վ. Օլբրայթը հաջորդ երկու սյունակներում (երրորդ և չորրորդ) բերում է վաղ հյուսիս-արեւմտյան «սեմական» այբուբենի (փյունիկյան այբուբեն) և վաղ հարավային «սեմական» այբուբենի գրանշանները: Նախ սրանց վերաբերյալ հակիրճ նշենք, որ վաղ հարավային այբուբենի գրանշանների գերակշռող մասը բացարձակ տարբեր են և հիքստյան և փյունիկյան գրանշաններից և չեն կարող որևէ խելամիտ ձևափոխության միջոցով բխեցվել նրանցից (տես աղյուսակ 15):

Վաղ հարավային այբուբենի համար բերվող գրանշանների մեծ մասն առկա է շատ ավելի վաղ վկայված շումերական պատկերագրության մեջ, իսկ բոլոր գրանշաններն առկա են վերին հին քարի դարում փորագրված Սյունիքի ժայռապատկերներում: Հետևաբար, ինչպես վերը նշեցինք հունական և փյունիկյան գրանշանների նույն ակունքից անկախ ծագման մասին, վաղ հարավային այբուբենը ևս ծագել է փյունիկյանից անկախ: Արաբական թերակղզու հարավային ափեր է բերվել


Աղյուսակ 15

Փյունիկյան	Վաղ հարավ.
𐤀 𐤁	𐤁 𐤂
𐤃 𐤄	𐤅
𐤆 𐤇	𐤈
𐤉	𐤊
𐤌 𐤍	𐤎
𐤏 𐤐	𐤑
𐤓 𐤔	𐤕
𐤗 𐤘	𐤙
𐤛 𐤜	𐤝
𐤟	𐤠 𐤡
𐤣 𐤤	𐤥 𐤦
𐤨	𐤩 𐤪
𐤬	𐤭 𐤮
𐤲	𐤳 𐤴
𐤶 𐤷	𐤸 𐤹
𐤼	𐤽

այբուբենի ստեղծման սկզբունքը ու Սյունիքի նշանագրերը և տեղում ստեղծվել մի այլ անկախ այբուբեն: Այստեղ ևս գրանշանների քանակի ճշգրտման խնդիրը կա:

Վերադառնանք մեր բուն խնդրին՝ Վ. Օլբրայթի աղյուսակում բերված հիքսոսյան գրանշանների տարատեսակների քննությանը:

Համեմատությունը դյուրացնելու համար հիքսոսյան գրանշանների այունակն առանձնացված և ներկայացված է նկար 15-ում: Այստեղ բացարձակ տարբեր գրանշանները նույն հնչյունին վերագրելու ակնհայտ օրինակներն են.



Phon. Value	Schematic Forms
𐤁	𐤁 𐤂
𐤃	𐤃 𐤄
𐤅	𐤅 𐤆
𐤇	𐤇 𐤈
𐤉	𐤉 𐤊
𐤋	𐤋 𐤌
𐤍	𐤍 𐤎
𐤏	𐤏 𐤐
𐤑	𐤑 𐤒
𐤓	𐤓 𐤔
𐤕	𐤕 𐤖
𐤗	𐤗 𐤘
𐤙	𐤙 𐤚
𐤛	𐤛 𐤜
𐤝	𐤝 𐤞
𐤟	𐤟 𐤠
𐤡	𐤡 𐤢
𐤣	𐤣 𐤤
𐤥	𐤥 𐤦
𐤨	𐤨 𐤩
𐤪	𐤪 𐤫
𐤬	𐤬 𐤭
𐤮	𐤮 𐤯
𐤲	𐤲 𐤳
𐤴	𐤴 𐤵
𐤶	𐤶 𐤷
𐤸	𐤸 𐤹
𐤺	𐤺 𐤻
𐤼	𐤼 𐤽
𐤾	𐤾 𐤿
𐤿	𐤿

Նկար 15


Եթե առաջին դիրքում գտնվող գրանշանի պատկերը պայմանականորեն անվանենք հիմնական, ապա հաջորդ դիրքերի գրանշանները, ըստ Վ. Օլբրայթի, հիմնականի տարատեսակներն են: Իրականում դրանք բացարձակ տարբեր ու անկախ գրանշաններ են, որոնց էլ մատնանշում էր Ջ. Գարբինին:

Վ. Օլբրայթը, ով քաջաձանոթ էր հիքսոսյան գրանշաններով գրառված և իր ժամանակ հայտնի բոլոր արձանագրություններին, պիտի գոնե հասկանար, որ եթե մի գրանշան և գծագրությամբ նրանից տարբեր, բայց իր կողմից նրա տարատեսակը համարված գրանշանը համատեղ հանդես են գալիս նույն արձանագրության մեջ, ապա դրանք պիտի դասակարգվեն որպես տարբեր հնչյունական արժեքներ ունեցող գրանշաններ: Նկար 16-ում բերված երկու արձանագրություններում էլ գծագրությամբ տարբեր 𐤁 և 𐤂 գրանշաններն առկա են միասին: Բոլորովի անհավանական ու անտրամաբանական է, որպեսզի նույն մարդը, նույն արձանագրության մեջ, նույն հնչյունն արտահայտի տարբեր գրանշաններով: Եթե գրանշանները տարբեր են, ուրեմն տարբեր են նաև նրանց հնչյունական արժեքները,

իմա՝ գործ ունենք երկու տարբեր տառանշանների հետ: Ստորև ավելի հիմնավոր ցույց կտանք, որ  և  տարբեր գրանշաններ են:

Արդյունքում, վերն առանձնացված 7 օրինակներից կարող ենք դուրս բերել առնվազն 7 տարբեր գրանշաններ (, , , , , , , որոնք Վ. Օլբրայթն ներկայացրել է որպես հիմնական գրանշանների տարատեսակներ:

Հետևաբար, միայն Վ. Օլբրայթի այս աղբատիկ աղյուսակի տվյալները վկայում են,




Նկար 16. Հիքսոսյան գրանշաններով գրաված №351 և №353 արձանագրությունները:

գրանշանների (, ) քննությամբ և օգտվենք Օ. Գոլդվասսերի, Ա. Լունդինի և Հ. Գրիմմեի բերած աղյուսակներից:

Առաջին գրանշանի ենթադրյալ տարատեսակների ցուցակները, ըստ հեղինակների, բերված են աղյուսակ 16-ում: Եթե այս գրանշանը Վ. Օլբրայթի աղյուսակում ներկայացված էր մի ենթադրյալ տարատեսակով, ապա Օ. Գոլդվասսերի, Ա. Լունդինի և Հ. Գրիմմեի աղյուսակներում դրանց քանակը շատ ավելին է:

Աղյուսակ 16. Հիքսոսյան այբուբենի  գրանշանի ենթադրյալ տարատեսակները:

	Օ. Գոլդվասսեր ¹⁵
	Ա. Լունդին ¹⁶
	Հ. Գրիմմե ¹⁷

Բացի Վ. Օլբրայթի աղյուսակում առկա  նշանից, այստեղ տեսնում ենք առնվազն ևս 5 գրանշաններ (, , , , ) իրենց տարատեսակներով, որոնք գծագրությամբ բոլորովին տարբեր են հիմնական գրանշանից () և կարող են դիտվել որպես անկախ գրանշաններ: Աղյուսակ 16-ի տվյալներից առանձնացված 7

¹⁵ . O. Goldwasser, The Advantage of Cultural Periphery: The Invention of the Alphabet In Sinai (Circa 1840 B.C.E), Culture Contacts and the Making of Cultures: Papers in Homage to Itamar Even-Zohar, Ed. Rakefet Sela-Sheffy, Gideon Toury, Tel Aviv, 2011, p.255

¹⁶ . А. Лундин, Дешифровка протосинайского письма, Москва, 1991

¹⁷ . H. Grimme, Althebräische Inschriften vom Sinai: Alphabet, Textliches, Sprachliches mit Folgerungen, Darmstadt: Folkwang-Verlag, 1923

գրանշանների վերաբերյալ մեր վերլուծությանն անհրաժեշտ տվյալները հավաքել ենք աղյուսակ 17-ում:

Առաջին պլունակում հիքստայան այբուբենի առանձնացված գրանշաններն են, երկրորդում՝ գշագրությամբ նրանց համապատասխանող շումերական նշանագրերն ու նրանց համար վերծանված ընթերցումները, երրորդում՝ Նշանագիրք իմաստնոցի համապատասխան նշանագրերն ու նրանց ընթերցումները, իսկ չորրորդ պլունակում բերված են համապատասխան նշանագրերի օրինակներ Սյունիքի ժայռապատկերներից:

Աղյուսակ 17. Հիքստայան այբուբենի  գրանշանի ենթադրյալ տարատեսակները և նրանց զուգահեռները շումերական պատկերագրության մեջ, Նշանագիրք իմաստնոցում և Սյունիքի ժայռապատկերներում:

Հիքստայան այբուբեն	Շումերական նշանագիր	Նշանագիրք իմաստնոց	Սյունիք
	     = LAGAB	 = ազգ  = ավետարան  = ճանապարհ	     
  	      = AB  (ZATU 737)	     = տաճար, եկեղեցի	     
	 = DUN ₃	   = դժոխք	   
 	    LAGABxU = PU ₂	 = սանդուխք  = (գոհա)սեղան  = ավետարան	       
 	   (ZATU 762)	𐎶 = լյառն  = խորհուրդ  = հավիտեան	 
  	-	𐎶 = կենդանի  = հեթանոս  = ավետարան	  
  	-	 = երաժիշտ	   

Ըստ աղյուսակ 17-ի տվյալների, հիքստայան այբուբենի առանձնացված յոթ գրանշաններից հինգը, որպես անկախ գաղափարագրեր, գործածվել են շումերական պատկերագրության մեջ: Գաղափարագրերից չորսի ընթերցումները հայտնի են ըստ նրանցից ծագած սեպանշանների վերծանված ընթերցումների: Երկու գաղափարագրի (, ) որոնք սեպանշանների չեն վերածվել, ընթերցումներն անհայտ են:

Հիքստայան այբուբենի հետազոտողներն այս բոլոր գրանշանները համարում են b=bet = «տուն» հնչյունի գրառման գրանշաններ: Եբրայերեն bet = «տուն» բառի և սեմական մյուս լեզուներում դրա զուգահեռների գրավոր վկայված հնագույն նախաձևը աքքադերեն bītu = «տուն, բնակարան, պալատ, տաճար» բառն է:

Աքքադերեն բառի շումերական գուգահեռները գաղափարագրվել են մի քանի սեպանշանների միջոցով: Աղյուսակ 18-ում բերված են այն նշանագրերը, որոնցից ծագել են «տուն» իմաստը կրող սեպանշանները: Բերված են նաև սեպանշանների ընթերցումներն ու իմաստները:



Սրանցից ամենագործածականը եղել է E₂ = «տուն, բնակարան, պալատ, տաճար» (աքքադ. bītu) սեպանշանը, սակայն վերջինիս նշանագիրը ընդհանուր ոչինչ չունի հիքսոսյան գրանշանների հետ: Շումերերենում «տուն, պալատ, տաճար, սրբավայր» իմաստ արտահայտող մյուս սեպանշաններին համապատասխանող նշանագրերը ևս ակնհայտորեն տարբեր են հիքսոսյան գրանշաններից:

Աղյուսակ 18. «Տուն» իմաստը կրող շումերական նշանագրերը:

		E₂	E ₂ = «տուն, տաճար, պալատ»
		GIS	GIS = «տուն, տաճար, պալատ»
		AB	E ₃ = «տուն, սրբավայր, վրան»
		GA	GA = «տուն, տաճար, պալատ»
		GA₂	GA ₂ = «տուն, տաճար, պալատ» MAL
		KIB	KIB = «տուն, տաճար, պալատ»
		SUG	SUG = «սրբավայր»
		MU	MU = «տուն, տաճար, պալատ»
		U	U = «տուն, տաճար, պալատ»

Հետևաբար, աղյուսակ 17-ում բերված հիքսոսյան գրանշանները չեն կարող միջազգետյան ծագում ունենալ:

Ի տարբերություն շումերական պատկերագրության, աղյուսակ 17-ի բոլոր գրանշաններն առկա են և միջնադարյան Նշանագիրք իմաստնոցում, և վերին հին քարի դարի Սյունիքի Ժայռապատկերներում: Նշանագիրք իմաստնոցը հիքսոսյան ,  գրանշանի դիմաց ներկայացնում է «տաճար» իմաստ: Նշանագրի պատկերը թերևս ներկայացնում է հնագույն տաճարների մի ձև, ինչպիսին էր օրինակ Հայ Աստծո տաճարը շումերական Eridu քաղաքում (տես նկար 17):




Նկար 17. «EN.KI= Հայ Աստծուն նվիրված Eridu-ի հնագույն տաճարի (XVI շերտ) պեղումները 1940-ական թվականներին և հատակագիծը:

Դառնանք հին Եգիպտոս և տեսնենք, թե հիքսոսյան գրանշանների մեկնաբանման հարցում ինչ հնարավորություններ են ընձեռնում եգիպտական հիերոգլիֆները: Եգիպտերենում «տուն, շինություն, տաճար, սրբավայր» իմաստներն արտահայտող հիմնական հիերոգլիֆները երեքն են, որոնք

Աղյուսակ 19. «տուն, սրբավայր» իմաստներն արտահայտող հիմնական հիերոգլիֆները:

Եգիպտական հիերոգլիֆ	Հիերոգլիֆի ընթերցումը	Հիերոգլիֆի իմաստը	Հայերեն զուգահեռը	Սյունիք
 (O1)	pr	տուն, շինություն, սրբավայր	ապար-ան	
 (O4)	h	սենյակ, բնակարան	h-իւղ, h-իւլ	
 (O6)	Hwt	(մեծ) կառույց, շինություն	հովիտ	

Այս դեպքում ունենք եգիպտական հիերոգլիֆների և հիքսոսյան այբուբենի գրանշանների ձևերի և իմաստների հստակ նույնություն.



Սակայն այստեղ էլ հանդիպում ենք մի այլ խաչընդոտի. հիշյալ հիերոգլիֆներից ոչ մեկի ընթերցումը չի սկսվում b=bet=«տուն» հնչյունով: Որպեսզի համոզվենք, որ տվյալ դեպքում եգիպտական հիերոգլիֆների ընթերցումներն ու իմաստները ճիշտ են վերծանված, մենք մի փոքր պիտի շեղվենք և դրանք քննենք իրենց հայերեն զուգահեռների հետ: Հայերենի միջոցով եգիպտական հիերոգլիֆների ընթերցումների ճշգրտումը բխում է մեր այն տեսակետից, որ Սյունիքի նշանագրերը տարածվել են իրենց լեզվի՝ հայերենի հետ: Ինչպես տեսնում ենք աղյուսակ 19-ում բերված տվյալներից, եգիպտական բոլոր հիերոգլիֆների նախօրինակներն առկա են Սյունիքի ժայռապատկերներում: Դա հիմք ընդունելով, դառնանք հիերոգլիֆների ընթերցումներին: Մինչ այդ, հիշեցման կարգով ասեմ, որ հիերոգլիֆիկ եգիպտերենի վերծանված տարբերակը համարվում է բաղաձայնային գիր և բառի ամբողջական ձևը վերականգնելու համար հարկ է այն ձայնավորել՝ բաղաձայների մոտ դնել ճիշտ ձայնավորներ: Հիշյալ հիերոգլիֆների համար դրա արդյունքը ներկայացրել ենք աղյուսակ 19-ի չորրորդ սյունակում, իսկ այժմ հիմնավորենք:

ԸՆԴՄԻՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Եգիպտական հիերոգլիֆների ընթերցումները և նրանց հայերեն զուգահեռները

 - այս հիերոգլիֆն օգտագործվում է որպես «խրճիթ, տուն» իմաստի գաղափարագիր և ընթերցվում է h: Հայերենում սրա զուգահեռներն են հիւղ, հուղ, հեղ, հիղ=«խրճիթ, տնակ, կացարան» և նույնիմաստ հոլ, խուղ բառերը, որոնք ունեն համապատասխանաբար

նախաձայն «հ» և «խ» հնչյուններ: Տնակ պատկերող նշանագրի համար, որպես ընթերցում, սկրոֆոնիայի սկզբունքով վերցվել է նրա հոլ/հիտ/խուտ անվանումների առաջին հնչյունը:

 - Այս հիերոգլիֆը ընթերցվում է pr, ինչը բառացի թարգմանում են «անձնական տուն, պալատ, դղյակ»: Հին թագավորության շրջանում pr է անվանվել մեծատոհմիկ աստիճանավորի սեփականությունը:¹⁸ Հին թագավորության շրջանի դամբարաններում գտնված բազմաթիվ որմնանկարներում պատկերված է, թե ինչպես են շրջակա բնակավայրերից pr-ի տիրոջը սննդամթերք մատակարարում: Այսպես կոչված Մեթենի արձանագրության մեջ նկարագրվում է այդպիսի անձնական տներից մեկը: Համաձայն արձանագրության, այն ուներ 200 արմունկ երկարություն և նույնքան լայնություն, որին կից տնկվել է պտղատու այգի, թզենիներ ու խաղողի որթեր և կառուցվել լճակ:¹⁹

Այս փաստերը վկայում են, որ խոսքն անկասկած վերաբերում է մեծատոհմիկ աստիճանավորին պատկանող ապարանքին: Հետևաբար եգիպտերեն pr բառը և հնչյունորեն, և իմաստով նույնական է դառնում հայերեն ապարան (aparan) = «մեծ տուն, պալատ, դղյակ» բառի հետ: Որպես այս նույնացման համար մի հավելյալ հիմնավորում, բերենք եգիպտերեն pr բառի համանունները և նրանց հայերեն թարգմանությունները:

Աղյուսակ 20. Եգիպտերեն pr=«մեծ տուն, պալատ» բառի համանունները և նրանց հայերեն թարգմանությունները:

pr բառի իմաստները	հայերեն համարժեքը	հայերեն բառի իմաստը
pr = կամք, ազատություն	պուր (pur)	ազատություն
pr = սեփականություն, գույք, ունեցվածք	ապուր (apur)	ապրանք, ունեցվածք
pr = առաջ գնալ	պար (par)	շրջանով պարել, աստղերի շարժումը
pr = ինչ որ թոչուն	պոր (por)	կարապ թոչունը

Ք.ա. III հազարամյակի սկզբում վկայված եգիպտերեն pr=ապարան բառի գոյությունը և նրա հնչյունական ձևը (pr բաղաձայնները) վկայում են, որ այն բառերը, որոնք Հ. Հյուբշմանը բերում է որպես հայերեն «ապարան» բառի թարգմանություններ (հին պարսկերեն apadāna, սանսկրիտ apadhā, եբրայերեն afeden, ասորերեն āfādānā, արաբերեն fadan), պետք է դնել հայերենից փոխառություն:

 ,  .  ,  - Այս հիերոգլիֆն ունի հwt ընթերցում և «մեծ տուն, կալվածք, տաճար» իմաստ: Երկրագործության հետ սերտ առնչություն ունեցող այս տիպի բնակավայրը մասնավոր սեփականություն էր և կրում էր իր տիրոջ անունը: Այն գրավում էր շատ մեծ տարածք, որում կային արտեր ու այգիներ: Այն միաժամանակ վարչա-տնտեսական կառավարման կենտրոն էր:²⁰ Այս տիպի բնակավայրերի տերերը պարտավոր էին պատերազմի ժամանակ զինաջոկատներ տրամադրել փարավոնին:²¹

Ի տարբերություն ագարակի, որը կարող էր լինել մի ընտանիքի սեփականություն, հwt տուն-տնտեսության նկարագրությունից բխում է, որ այն բազմաընտանիք ու մեծաքանակ, տնտեսապես հզոր տոհմի ժառանգաբար փոխանցվող սեփականություն էր: Պատկերը

¹⁸ . Grdseloff B., Deux inscriptions juridique de l'Ancien empire, Annales du service des antiquite's de l'Egypte, Le Caire, 1943, t. XLII, pp. 27-70: Հղումն ըստ՝ Савелева Т.Н., Аграрный строй Египта в период Древнего царства, Москва, 1962

¹⁹ . 'Sethe K., Urkundendes Alten Reichs, Bd I, Hft 1-4, Leipzig, 1932-1933, (Urkunden des aegyptischen Altertums, Abt. 1, Hft 1-4). Հղումն ըստ՝ Савелева Т.Н., Аграрный строй Египта в период Древнего царства, Москва, 1962

²⁰ . Савельева Т.Н., О терминах pr, Hwt и aA.t в надписи Мечена, Древний Египет, Москва, 1960, стр. 181-194.

²¹ . Edel E., Altägyptische Grammatik, t. 1, Roma, 1955, s. 336

միարժեքորեն համընկնում է հայոց նախարարական տների նկարագրությանը:²² Ըստ Մովսես Խորենացու, հայոց նախարարական տոհմերը ծագել են անվանադիր նահապետ Հայկի երեք որդիների (Արմենակ, Մանավազ, Խոռ) ժառանգներից:²³ Որպես վարչատնտեսական և ռազմա-քաղաքական միավոր, հայոց նախարարական տոհմերը կոչվում էին «տուն»՝ տոհմի նահապետի անունով (Անգեղ տուն, Արծրունեաց տուն, Խոռխոռունեաց տուն և այլն), այսինքն ճիշտ այն իմաստով, ինչ իմաստ վերագրվում է հրե անվանմանը:

Հայաստանի շատ տեղանուններ հուշում են, թե վերոհիշյալ իմաստով «տուն» բառին երբեմն փոխարինել է «հովիտ» բառը (օրինակ՝ Բալահովիտ, Աղիովիտ, Կոզովիտ/Գոզովիտ): Օրինակ Կոզովիտ անվան փոխարեն երբեմն գործածվել է «Կօզ գաւառ» կամ «Կոզ երկիր» անվանումը:²⁴ Այս տեղանունների տարբեր ձևերի համեմատությունները ցույց են տալիս, որ հնում «հովիտ» բառի իմաստների շրջանակի մեջ պիտի լինեին նաև «երկիր, բնակավայր, տուն» իմաստը և երկրանունը կազմվել «ցեղանուն» + «հովիտ» բանաձևով:

Այս տեսակետը հաստատող փաստեր ենք գտնում նաև Ք.ա. III-I հազարամյակների սեպագիր աղբյուրներում: Այսպես, ուրարտական շրջանի աղբյուրներում տեսնում ենք hubi (hu-bi, hu-bi-i, hu-bi-ni-e) բառը, որին Գ. Ղափանցյանն իրավացիորեն նույնացրել է հայերեն «հովիտ» բառի հետ, սակայն վերագրել միայն աշխարհագրական իմաստ (գետահովիտ, ձորահովիտ և այլն):²⁵ Որոշ գիտնականներ ընդունելով հանդերձ Գ. Ղափանցյանի տեսակետը, hubi=«հովիտ» բառին վերագրում են նաև «երկիր, գավառ» իմաստը:²⁶

Զվարթնոց տաճարի պեղումների ժամանակ հայտնաբերված կոթողի վրա Ռուսա Բ արքան արձանագրել է, որ անմշակ վայրում արտեր է գցել, խաղողի ու մրգատու ծառերի այգի է տնկել, այդ ամենը ոռոգելու համար Հրազդան գետից ջրանցք է փորել և բնակավայր հիմնել: Այս ամենը միասին (արտեր, այգիներ, ջրանցք, բնակավայր), որպես ունեցվածք՝ կալվածք, հիմնողի անունով անվանվել է 'Rusainie hubi:²⁷ Այնքն, Ք.ա. I հազարամյակի Հայաստանում տեղի ունեցած այս երևույթը (հովիտ = hubi բառի գործածությունը «կալվածք» իմաստով) նույնական է Եգիպտոսում Ք.ա. III հազարամյակի սկզբում գրառվածի հետ (հովիտ = հրե):

Հովիտ=hubi=հրե շղթայի մի միջանկյալ օղակ ենք գտնում «խուռիական» սեպագիր արձանագրություններում, ի դեմս Նուզիի որոշ անձնանունների (Artahubi, Kulahubi, Šamharahubi, Hubit և այլն):²⁸ Անշուշտ այս պարագայում դժվար թե -hubi բաղադրիչն ունենա աշխարհագրական հովիտ = «ձոր» իմաստ, ինչպես կարծում էր Գ. Ղափանցյանը: Իրականում առավել հավանական է, որ այս պարագայում բառը կրում է «ունենալ, ունեցվածք» (Artahubi = Արտային (տեր) ունեցող) կամ՝ «հով, հովանի» իմաստ (Artahubi = Արտայից հովանավորվող):

Եգիպտերենում հրե բառը նշանակում է նաև.

հրե = «խփել, ծակել, հարվածել, հրել», որի հայերեն զուգահեռն է **խոթ/խայթ** = «խայթել, ծակել, մշտել, հրել»:

հրե = «անասունների խումբ» և նույնական է հայերեն **հաւտ = հօտ** = «անասունների խումբ, հօտ»:

«Տաճար» իմաստ գրառելու համար այս և նոխորդ հիերոգլիֆին կցվել է **𐤏, 𐤑 = ուր** = «աստված» հիերոգլիֆը, որը շատ տարածված է Սյունիքի ժայռապատկերներում: Այդ կցագրությունը տառացի նշանակել **𐤏𐤑 = հրե ուր** = «աստծո տուն»: Սյունիքի ժայռապատկերներում հրե հիերոգլիֆի համապատասխան նշանագիրը բազմիցս հանդես է

²² . Ն. Արոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987

²³ . Մովսիսի Խորենացու պատմություն Հայոց


²⁴ . Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Դ, ա


²⁵ . Капанцян Г., Хайаса-колыбель армян, Историко лингвистические работы, т.1, Ереван, 1956, ст. 196

²⁶ . Меликишвили Г., Урартские клинообразные надписи, Москва, 1960

²⁷ . Նույն տեղում, տե՛ս №281 արձանագրությունը:

²⁸ . Gelb I., Hurrians and subarians, Chicago, 1944

գալիս տաճարների հատակագծերում, որի մեջ հաճախ գծագրված է $\overline{\text{P}}, \overline{\text{P}}$ = «աստված» նշանագիրը.  (տես նկար 18):



Նկար 18. Ի՞նչ հիերոգլիֆը Սյունիքի ժայռապատկերների տաճարական հատակագծերում:

Նկար 17-ի վերջին պատկերի «եգիպտերեն» ընթերցումը կլինի.

 =  (ջուր) +  (աստված) +  (տուն, տաճար) = Ջրի Աստծո տուն (ո ուր ի՞նչ), որից ցած գտնվող վանդակում/սենյակում եգիպտական  = «աղբյուր, ավազան» հիերոգլիֆը ներկայացնող  նշանագիրն է:

Վերջում հավելենք, որ եգիպտական ի՞նչ հիերոգլիֆն առկա է նաև Նշանագիրք իմաստնոցում () , որին վերագրվել է իմաստի առումով մի փոքր շեղված «քաղաք» իմաստ:

Օգտվելով առիթից, անդրադառնանք ևս մի բնակավայրի անվանման՝ , ,  = grg, որը մեկնաբանվում է որպես մշակվող հողամասերին կից հիմնադրված բարեկարգ բնակավայր և միշտ հիշատակվում է հիմնադրողի անունով:²⁹  = grg հիերոգլիֆի պատկերը թեև բացակայում է Սյունիքի ժայռապատկերներում, սակայն կան նրա երկու բաղադրիչները ( = «բրիչ, թռիչք» և  = «ջրավազան»):

Ելնելով grg բնակավայրի նկարագրությունից ու անվանման մեջ առկա բաղաձայներից, կարծում եմ ընթերցողն արդեն գուշակեց, որ այս պարագայում գործ ունենք հայերեն «ագարակ» բառի հետ: Հայերենում «ագարակ» բառը նշանակում է մշակվող հողամասը և հողամասի տիրոջ ու նրա մշակների բնակության համար հողամասին կից կառուցված շինությունը: Շումերենում սրանց զուգահեռն է A.GAR₃=agar=«արտ, մարգագետին» բառը:

Որպես ագարակ = grg նույնության մի հավելյալ հիմնավորում, ներկայացնենք եգիպտերեն grg բառի մի քանի համանուններ և նրանց հայերեն զուգահեռները (տես աղյուսակ 21).

Աղյուսակ 21. Եգիպտերեն grg բառի համանունները և նրանց հայերեն զուգահեռները:


Եգիպտերեն grg բառի իմաստները	Հայերեն համարժեքը	Հայերեն բառի իմաստը
grg = «ագարակ»	ագարակ	ագարակ
grg = «սուտ, կեղծիք, ստախոս»	քուրք	սուտ, կեղծիք, թշնամանք
grg = «անհասկանալի կապվածություն, կապ արտահայտող գոյական»	գիրկ	գրկելը, գրկախառնություն
	գիրգ ³⁰	խնամք տանել, գուրգուրել, փայփայել

²⁹ . Abd el-Moneim Abu-Bakr, Excavations at Giza, 1949-1950, Kairo, 1953, p. 57-58
Edel E., Altägyptische Grammatik, t. 1, Roma, 1955 (Analecta orientalia, 34)


³⁰ . Հայերեն «գիրգ» բառից ունենք գրգարան=«փափկության վայր, դրախտ, եղեն»: Ըստ Հին Կտակարանի նկարագրության, Եդեմի պարտեզն ագարակ էր, որտեղ ապրում և ագարակը մշակում էր Ադամը:


grg = «անհայտ բույս»	կորեակ	կորեկ հացաբույսը
grg = «ուրախություն, ցնծություն»	քրք-	քրքանք, քրքիջ, ծիծաղ
grg = «հաստատել, հիմնել, կարգավորել, դասավորել»	կարգ	շարք, դասավորություն, սահմանում, կարգուկանոն
grg = «ամուսնության օժիտ»	կարգ (-ել)	ամուսնացնել, կարգել

Վերադառնանք մեր բուն նյութին:

Արդյունքում համոզվում ենք, որ Սյունիքի վերին հին քարեդարյան նշանագրերը () հին եգիպտոսում գործածվել են որպես հիերոգլիֆներ () , որոնց ընթերցումներն ունեն իրենց հայերեն գուգահեռները: Վերստին համոզվում ենք, որ Սյունիքի նշանագրերը տարածողները և աշխարհի տարբեր ծագերում նրանց հիման վրա գրային համակարգեր ստեղծողները եղել են հայալեզու մարդիկ:

Դառնանք մեր խնդրին և փաստենք, որ հիքսոսյան այբուբենի գրանշաններին համապատասխանող հիերոգլիֆների հայտնի ընթերցումներից (=Սյունիքի նշանագրերի ընթերցումներից) ոչ մեկը բ=b հնչյունով չի սկսվում: Սրանից բխում են հիքսոսյան այբուբենին վերաբերող հետևյալ եզրակացությունները.

1. Սյունիքի ժայռապատկերների, Նշանագիրք իմաստնոցի շումերական պատկերագրության և եգիպտական հիերոգլիֆների տվյալները վկայում են, որ հիքսոսյան այբուբենի  գրանշանները հիշյալ գրային համակարգերում գործածվել են որպես տարբեր ընթերցումներ ունեցող անկախ գաղափարագրեր: Հետևաբար դրանք չեն կարող դիտվել որպես մի գրանշանի գծագրության տարատեսակներ և պիտի դիտվեն որպես հիքսոսյան այբուբենի տարբեր հնչյուններ ներկայացնող տարբեր գրանշաններ: Հետևաբար  գրանշանի «տարատեսակների» ցուցակից առանձնացնում ենք ևս 7 անկախ գրանշաններ - :

2. Հիքսոսյան այբուբենի երեք գրանշաններին () համապատասխանող եգիպտական հիերոգլիֆները () , Նշանագիրք իմաստնոցի նշանագրերը () և Սյունիքի նշանագրերը () ունեն «տուն, տաճար, սրբավայր» իմաստներ, սակայն, ըստ հիերոգլիֆների հայտնի ընթերցումների, չունեն բ=b հնչյունով սկսվող ընթերցում: Հետևաբար, ըստ հիերոգլիֆների ընթերցումների, հիքսոսյան այբուբենի այդ գրանշաններին կամ նրանցից մեկին բ=b ընթերցում վերագրելը սխալ է:


Հիքսոսյան այբուբենի հիշյալ գրանշաններից որևէ մեկին բ=b հնչյունով սկսվող ընթերցում վերագրելու հնարավորություն այնուամենայնիվ ընձեռնում է հայերենը: Այդ գրանշաններին համապատասխանող նշանագրերից մի քանիսն ունեն «տաճար, սրբավայր» իմաստ և նրանցից մեկը կարող էր ունենալ բազին=«մեհեան, տաճար, զոհասեղան» ընթերցում:³¹ Մեր այս ենթադրության հավելյալ հիմնավորում է այն

³¹ . Բազ=«աստված» բառից ածանցված «բազին» բառի հնագույն գրավոր վկայությունը շումերական սեպագիր աղբյուրներում է. PA.GI = ba2-gin5 = bagin = բազին = «տաճար, սրբավայր» (աքքադ. *māhāzu*):

փաստը, որ հիքսոսյան այբուբենի  գրանշանի զուգահեռը Նշանագիրք իմաստնոցում () ունի «սեղան, զոհասեղան» իմաստ:³²

Քանի որ մեր խնդիրը հիքսոսյան այբուբենի գրանշանների քանակի ճշգրտումն է և ոչ վերծանումը, ապա սրանով ավարտենք այս գրանշանի քննությունը և անցնենք հաջորդին: Գրանշանը և նրա ենթադրյալ տարատեսակները բերված են աղյուսակ 22-ում:

Աղյուսակ 22. Հիքսոսյան այբուբենի  գրանշանը և նրա ենթադրյալ տարատեսակները:

	Օ. Գոլդվասսեր
	Ա. Լունդին
	Հ. Գրիմմե

Աղյուսակի տվյալների զննությունը ցույց է տալիս, որ այստեղ գործ ունենք երկու անկախ նշանագրերի հետ: Առաջին նշանագիրը պատկերում է ոտքերը տարածած և ձեռքերը արմունկից ծալած ու վեր բարձրացրած մարդու սխեմատիկ պատկեր (): Այս նշանագիրը հին Եգիպտոսում գործածվել է որպես գաղափարագիր: Սյունիքի ժայռապատկերներում այս նշանագիրը շատ է տարածված:

Հաջորդ, նախորդից ակնհայտ տարբերվող նշանագիրը, եթե նույնպես մարդու սխեմատիկ պատկեր է, ապա ներկայացնում է նույն կերպ ձեռքերը բարձրացրած, բայց ծնկի եկած մարդու սխեմատիկ պատկեր, որը ևս, որպես առանձին նշանագիր,

առկա է եգիպտական հիերոգլիֆներում ( -A73,  -C11): Ձեռքերը տարածած ծնկաչոք մարդու սխեմատիկ պատկերն առկա է նաև Սյունիքի ժայռապատկերներում

և ներկայացված է տարբեր դիրքերից ():

Այս նշանագրից է ծագել շումերական  = GAL սեպանշանը, որի հիմնական իմաստն է gal = «մեծ, խոշոր» (հայերեն gal = գաղ = «խոշոր, մեծ», աքքադ. *rabû*):

Նշանագրի տարատեսակները առկա են նաև Նշանագիրք իմաստնոցում և կրում են տարբեր իմաստներ: Այս բոլոր տվյալներն ամփոփված են աղյուսակ 23-ում:

Լեզվաբանները հայերեն բազմապատկերը փոխառություն են դնում միջին պարսկերեն նույնիմաստ bag բառից (հմմտ. նաև ռուսերեն bog), պատճառաբանելով, թե հայերեն բառը բնիկ լինելու դեպքում պիտի ունենար «բակ» ձևը: Այս պատճառաբանությունը անհիմն է ու սուտ, քանզի հիմնված է նույն լեզվաբանների հնարած կեղծ հնչյունափոխության օրենքների վրա:

Հայկական լեռնաշխարհի հարավ-արևելյան սահմաններին հարող տարածքներում իրանական ցեղերի վաղագույն հետքերը վերաբերում են Ք.ա. VIIIդ (Յ. Грантовский, Ранняя история иранских племен Передней Азии, Москва, 1970): Եթե «բազ» և «բազին» բառերը տարածաշրջանում վկայված են շումերական ժամանակներում, իսկ իրանական ցեղերը հայտնվել են միայն Ք.ա. VIIIդ, ապա նրանք պիտի բառը վերցնեին տեղաբնիկներից՝ հայերից:

³². Պատկերագրության մեջ շրջան և քառակուսի պատկերող նշանները, որպես փակ տարածքի իմաստն արտահայտող նշանագրեր, եղել են համարժեք: Օրինակ՝ շումերական LAGAB նշանագիրը պատկերվել է և շրջանի, և քառակուսու տեսքով () UDU նշանագիրը՝  և այլն:

Աղյուսակ 23. Հիքսոսյան գրանշանները և նրանց զուգահեռները Եգիպտոսում, Շումերում, Սյունիքի ժայռապատկերներում և Նշանագիրք իմաստնոցում:

Հիքսոսյան այբուբեն	Եգիպտական հիերոգլիֆ	Շումեր. նշանագիր	Նշանագիրք իմաստնոց	Սյունիքի նշանագրերը
	 A28	-	-	
	 A73 C11	 GAL=«մեծ»	 Կ = միտք Կ = դատավոր Կ = աշուն Կ = պատմուճան Կ = պատարագ Կ = վարագույր	

Աղյուսակից տվյալներից նորից տեսնում ենք, որ մեր առանձնացրած երկու նշանագրերը, որպես անկախ գաղափարագրեր, գործածվել են Սյունիքի ժայռապատկերներում, շումերական պատկերագրության մեջ, եգիպտական հիերոգլիֆներում և Նշանագիրք իմաստնոցում: Հետևաբար այս դեպքում ևս հիքսոսյան այբուբենի Կ և Կ գրանշանները ոչ թե մի գրանշանի տարատեսակներ են, այլ՝ տարբեր հնչյունական արժեքներ ունեցող տարբեր գրանշաններ:

Առաջին հայացքից մեր այս եզրակացությունը հակասում է այն փաստին, որ առանձնացված նշանագրերին համապատասխանող եգիպտական հիերոգլիֆներն ունեն նույն հնչյունով սկսվող ընթերցումներ.

= = hai

= = hh

= = ?

և հիքսոսյան այբուբենի այդ գրանշաններին ևս վերագրվում է h ընթերցում: Այս թվացյալ խոչընդոտը լուծվում է հայերենի միջոցով:

Եգիպտական հիերոգլիֆի համար վերծանվել է hai ընթերցում և «բարձր», «գոհություն, բավականություն» ու «ողբ, նեղություն» իմաստներ: Եգիպտական հիերոգլիֆի այս ընթերցման ու իմաստների հայերեն զուգահեռներն են. հայ=«հսկա», հայ=«բավականություն, հավանություն արտահայտող բացականչություն», հայ=«նեղություն, ողբալի վիճակ»: Մարդու նման դիրքն իսկապես արտահայտում է այդ վիճակները:

Այս տվյալները որոշակի հիմքեր են տալիս ենթադրելու, որ հիքսոսյան այբուբենի Կ գրանշանի համար իսկապես կարող ենք վերցնել h ընթերցում: Սյունիքի ժայռապատկերներում մարդու սխեմատիկ բազմազան պատկերների շարքում այս նշանագիրը ամենատարածվածներից է: Այն հաճախ հանդես է գալիս ընդգծված արական հայտանիշով (տես աղյուսակ 23): Հանդես է գալիս ինչպես առանձին,

այնպես էլ այլ նշանագրերի հետ կցագրված: Նման կցագրությունների մի շարք պարզ և բարդ նմուշներ են բերված նկար 19-ում:



Նկար 19

Սյունիքի ժայռապատկերներում այս նշանագրի մեծ տարածվածությունը, մարդակերպությունը, հաճախ զանազան այլ նշանագրերի ուղեկցությամբ հանդես գալը հուշում են, որ այդ նշանագիրը ներկայացրել է ժայռապատկերները փորագրողների մի կարևոր Աստծո: Այս մեկնաբանությունը հաստատվում է նաև այն փաստով, որ այս մարդակերպ նշանագրին երբեմն կցագրվում է մի այլ նշանագիր

() , որը վաղ մատենագրության շրջանից հայտնի է  = պատիւ անունով: Նշանագիրն օգտագործվել է որպես «աստված, սուրբ» իմաստը կրող ցուցիչ և դրվել է համառոտագրված դիցանունների և սրբազան բառերի վրա.³³

³³ . Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, տես՝ «պատիւ» բառահոդվածը:

 = պատիւ նշանը մատենագրության մեջ հայտնի է նաև «քաշ» և «փուշ» անուններով: Նշանի պատկերը և նրա «փուշ» անվանումը ծագել են փշի (բուսական, ձկան) պատկերից և փուշ=«փուշ» բառից:

Բուսական փշեր և ձկան փուշ



- «պատիւ» նշանագիրը Սյունիքի ժայռապատկերներում



Հետագայում նշանի մոտ 45° դեպի ձախ պտտած տարբերակն () օգտագործվել է որպես երաժշտական խազ և կոչվել «փուշ»: Նշանի նախնական տեսքը և «պատիւ», «քաշ» անվանումները մնացել են որպես սրբազան անունների ցուցիչ:

**Պատիւն որ է քաշն՝ որ ի վերայ երկու գրոյն
դնեմք, որոշէ զանունն Աստուծոյ ի պիտակ
անուանց աստուածոցն**

Ելնելով մատենագրության մեջ նշանագրին տրված այս բացատրությունից, վերի
գաղափարագրության նմուշը () կարող ենք մեկնաբանել հետևյալ կերպ.

$$\text{𐎶} = \text{𐎵} (= \text{Աստված}) + \text{𐎶} (= \text{դիցանուն})$$

Ամփոփելով ասվածը, հանգում ենք այն եզրակացության, որ Սյունիքի
մարդակերպ  նշանագրի միջոցով գաղափարագրվել է մի դիցանուն, որի
ընթերցումը պարզում ենք Սյունիքի նշանագրի հետ նույնական եգիպտական
հիերոգլիֆի ընթերցումից.

$$\text{𐎶} = \text{𐎶} = \text{hai} = \text{հայ:}$$

Այնուհետև հիմք ընդունելով այն իրողությունները, որ

1. Սյունիքի ժայռափոր նշանագրերը տարածվել են գաղափարագրման լեզվի՝
հայերենի հետ և եգիպտական հիերոգլիֆի ընթերցումն ու իմաստները
հայերենում ունեն իրենց ճշգրիտ զուգահեռները, ապա եգիպտական
հիերոգլիֆի hai ընթերցումը կարող ենք վերագրել նաև Սյունիքի
նշանագրին:
2. Շումերական և բաբելական սեպագիր աղբյուրները վկայում են, թե
քաղցրահամ ջրերը մարմնավորող, իմաստության տիրակալ,
աշխարհակարգը սահմանող և բանական մարդուն արարող ⁴EN.KI = ⁴E2.A
Աստվածը կրել է նաև ⁴Hai անուն: ³⁴
3. Հին աշխարհում տարածված երևույթ էր ցեղանունը բխեցնել ցեղի
գերագույն և նախնի՝ ցեղի արարիչ համարվող Աստծո անունից: Հայոց

³⁴ . A. Archi, "The god Hay(y)a (Ea/Enki) at Ebla." In *Opening the Tablet Box. Near Eastern Studies in Honor of Benjamin R. Foster*, ed. S. Melville and A. Slotski, 2010, pp. 15-36, Leiden-Boston: Brill
M. Weeden, "The Akkadian words for 'grain' and the god Haya." *Welt des Orients* 39, 2009, pp. 77-107
J.-M. Durand, "La religion amorrite en Syrie à l'époque des archives de Mari." In G. del Olmo Lete (ed.),
Mythologie et Religion des Sémites Occidentaux, Vol. I, Ébla, Mari, 2008, pp. 131-752, Leuven: Peeters.

Սեպագրագետների մեջ տարածված է այն տեսակետը, թե ⁴Haia դիցանունը ⁴E2.A դիցանվան
աքքադերեն տարբերակն է, ինչը անհիմն է:

Հայ = ⁴Haia դիցանվան սեպագիր գրությունը սկզբում ընթերցվում էր ⁴HA.NI = ⁴Ha-ni = ⁴Hani:
Հետագայում հայտնաբերվեց դիցանվան ⁴HA.A.A գրեղանը, ինչը սեպագրագետներին ստպեց գալ այն
համոզման, որ տարածված ⁴HA.NI գրության մեջ NI սեպանշանի ու ընթերցման փոխարեն հարկ է
վերցնել նրա ia3 ընթերցումը և դիցանունն ընթերցել ⁴HA.NI = ⁴Ha-ia3 = ⁴Haia: Քանի որ NI սեպանշանն
ունի նաև i3 ընթերցում, ապա դիցանունը կարող ենք ներկայացնել նաև ⁴HA.NI = ⁴Ha-i3 = ⁴Hai =
Աստված Հայ ձևով:

Հայերենի տվյալների ներգրավումը ցույց է տալիս, որ երեք գրեղաններն էլ ճիշտ են,
մեկնաբանվում են միայն հայերենի դաշտում և ներկայացնում են նույն Աստծուն.

1. ⁴HA.NI = ⁴Ha-ni = ⁴Hani = Աստված Հանի = «աստված նախնի»
2. ⁴HA.NI = ⁴Ha-ia3/i3 = ⁴Haia/ ⁴Hai = Աստված Հայ = «հայոց արարիչ աստվածը»
3. ⁴HA.A.A = ⁴HA A.A = ⁴Ha(i) A.A = Հայր Աստված Հայ

Դիցանվան գրառման այս երրորդ ձևը իմաստային առումով առաջինի մի այլ տարբերակն է և
հանի=«նախնի» բառը փոխարինված է A.A = «հայր» բառով (աքքադ. *abu*):

Հայ Աստծուն իր նախնի կարող է կոչել միայն նրա անունը կրող ցեղը՝ Հայ ազգը:

պարագայում Հայ ցեղանունը պիտի բխեցվեր Հայոց դիցարանի Արարիչ Աստծո՝ Hai = Հայ անունից:

Արդյունքում, վստահաբար կարող ենք ասել, որ  =  = hai նշանագիրը, որպես այբուբենական գրանշան, ակրոֆոնիայի սկզբունքով կարող էր արտահայտել «հ» հնչյունը, որը «հայ» բառի և Հայ դիցանունի առաջին հնչյունն է:

Այժմ փորձենք պարզել, թե որպես այբուբենական գրանշաններ,  (A73) և  (C11) հիերոգլիֆներն ու Սյունիքի համապատասխան նշանագրերն  () ինչ ընթերցումներ կարող են ունենալ: Քանի որ  հիերոգլիֆի

ընթերցումն անհայտ է, ապա պիտի հենվենք միայն  հիերոգլիֆի ընթերցումների վրա: Վերջինս դիցանուններ նշանակող հիերոգլիֆների ցուցակից է: Նրա համար վերծանվել է հի ընթերցում, որը նաև գործածվել է որպես դիցանուն. Հի: Հիերոգլիֆի այս ընթերցման իմաստներն են՝ «հեղեղ, ջրհեղեղ», «շատ, բազում»: Այս վերջին իմաստն օգտագործվել է «միլիոն» թիվը գաղափարագրելու համար:

Հիերոգլիֆի հի=«հեղեղ, ջրհեղեղ» ընթերցումը բացահայտ վկայում է, որ գործ ունենք բնիկ հայերեն հեղ=«թափել, լցնել, հեղել» արմատի կրկնական հեղհեղ>հեղեղ=«ջրհեղեղ, ջրի հորդ հոսանք» ձևի հետ, հի = հեղ հեղ =«հեղեղ»:

Հայերենում «հեղ» արմատն ունի նաև «հալ», «ող» և «զեղ» ձևերը:³⁵ Վերջին ձևն առաջացել է «հեղ» արմատին «զ» սաստկական նախաձայնի հավելումով. զ+հեղ>զեղ: Արմատի նոր ձևով առանձնացվել ու սաստկացվել է հեղ=«լցնել» արմատի «թափվելու չափ լցնել, առատ, շատ» իմաստը. զեղ=«առատ, շատ, թափվելու չափ լիքը»: Արմատի այս ձևից էլ ունենք զեղուլ=«առատ, շատ», զեղուն=«լիովի»:

Արդյունքում տեսնում ենք, որ եգիպտական  հիերոգլիֆի հի ընթերցումը և «հեղեղ» իմաստը համապատասխանում են բնիկ հայերեն «հեղ» արմատի կրկնական ձևին: Նույն հիերոգլիֆի «առատ, շատ» իմաստն էլ համապատասխանում է «հեղ» արմատի սաստկական «զեղ» ձևին: Քանի որ  (C11) հիերոգլիֆի հիմքը  (A73) հիերոգլիֆն է, որին կցագրվել է  (M4) հիերոգլիֆը, ապա նույն ընթերցումն ու իմաստները պիտի կրեր նաև  (A73) հիերոգլիֆը:

Հետևաբար, եթե եգիպտական  (A73) և  (C11) հիերոգլիֆները և Սյունիքի ժայռապատկերների համապատասխան նշանագրերը գործածվեին որպես այբուբենական գրանշաններ, ապա ակրոֆոնիայի սկզբունքով նրանց կարող էին վերագրել թե h=h (**h**-*հղ*), թե՝ z=q (**q**-*հղ*) ընթերցում:

Հայերենի բառապաշարը հնարավորություն է տալիս ճշգրտել այբուբենական գրանշանի ընթերցումը, ինչպես նաև բացատրել, թե ձեռքերը վեր բարձրացրած ծնկաչոք մարդու պատկերով ինչպես գաղափարագրել զեղ=«առատ, շատ» բառը և նրա «հեղ» արմատական ձևը:

Ամենուր և բոլոր ժամանակներում ձեռքերը վեր բարձրացրած ծնկաչոք մարդու պատկերը կապվել է յուր կատարած հանցանքը գիտակցող, զղջացող և գուր հայցող

³⁵ . Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, տես՝ «հեղ» բառահոդվածը:

մարդու հետ: Նման մարդն այդ դիրքով հայտնվում է նրա դեմ (Աստված, թագավոր, իշխան և այլն), ում հանդեպ մեղանշել է:

Հայերենում այդ երևույթը բնութագրվում է «զեղ» բառով, որից ունենք գոջանալ=«ափսոսալ, փռշտանալ, ապաշխարել», գոջումն=«ափսոսալը, փռշտանալը, գուր իայցելը»: Հետևաբար ձեռքերը բարձրացրած ծնկաչոք մարդու սխեմատիկ պատկերը ներկայացնող Սյունիքի նշանագրերը, եգիպտական հիերոգլիֆը (A73) կարող ենք բացատրել որպես ապաշխարող կամ գուր իայցող մարդու պատկեր և նրան, որպես գաղափարագրի, վերագրել «զեղ-» ընթերցում, որը «զեղ» բառի արմատն է:³⁶ Իսկ քանի որ զեղ=«առատ, շատ» բառի իմաստն առարկայական չէ և հնարավոր չէ պատկերել, ապա այն պիտի գաղափարագրվեր այնպիսի առարկայի պատկերի միջոցով, որի անվանումը համանուն է «զեղ» բառին: Այդ համանունությունն ապահովում է հայերենը, ի դեմս «զեղ» և «զեղ-ջ» բառերի:

Գաղափարագրության մեջ «զեղ» և «զեղ-ջ» բառերի համանունության կիրառման և դրանք ձեռքերը վեր բարձրացրած ծնկաչոք մարդու սխեմատիկ պատկեր ներկայացնող նշանագրով գաղափարագրելու մասին մեզ ուղղակի վկայություն է տալիս Նշանագիրք իմաստնոցը: Նույն նշանագիրն այստեղ վկայված է «վարագույր,

ծածկոց» իմաստով (Ψ=«վարագույր», տես աղյուսակ 23): Հայերենում «ծածկել, թաքցնել, պահել, վարագուրել» իմաստն արտահայտող հոմանիշների շարքին է պատկանում «զեղչ» բառը, որի բայական ձևն է զեղչել=«ծածկել, թաքցնել, պահել, վարագուրել»: Ինչպես «զեղ-ջ» բառի դեպքում էր, «զեղչ» բառը ևս կազմված է «զեղ» արմատից և «-չ» աճականից: Արդյունքում կարող ենք պնդել, որ նույն նշանագրով գաղափարագրվել են զեղ=«առատ, շատ», զեղ-ջ =«զոջալ» և զեղ-չ =«ծածկել, թաքցնել»



համանուն բառերը. Ψ = զեղ, զեղ-ջ, զեղ-չ: Զեղ = Ψ նշանագրի միջոցով հիշյալ համանուն բառերի գաղափարագրումը սկիզբ է առել վերին հին քարի դարում փորագրված Սյունիքի ժայռապատկերներում, անընդհատ գործածվել է և հասել մինչև միջնադար:

Հետևաբար ձեռքերը վեր բարձրացրած ծնկաչոք մարդու սխեմատիկացված գծապատկերին, որպես հիքսոսյան այբուբենի գրանշանի, հարկ է վերագրել z=q հնչյունական արժեք:

Հիմք ընդունելով վերը բերված փաստերը, ներկայացնենք ևս մի դիտարկում: Վերը բերված է Սյունիքի ժայռապատկերներում ձեռքերը վեր բարձրացրած ծնկաչոք մարդու սխեմատիկ պատկերներ տարբեր դիրքերից: Դրանց մեջ զգալի թիվ են կազմում կողային դիրքը ներկայացնող պատկերները (տես աղյուսակ 24), որոնք ճշգրիտ նույնական են հայոց այբուբենի «զ» տառանշանի հետ: Իմա՝ Հայոց «զ» տառանշանը կարող էր ծագել «զեղ», «զեղ-ջ», «զեղ-չ» ընթերցում ունեցող նշանագրի տարբերակից: Սյունիքի ժայռափոր նշանագրերից Հայոց այբուբենի գրանշանների ծագմանը դեռ կանդրադառնանք:

³⁶ . Հմմտ. գաղ>գաղջ, գիւղ, զեղ>զեղջ, շուռ>շուրջ և այլն:

Աղյուսակ 24. Սյունիքի ժայռապատկերներում ձեռքերը վեր բարձրացրած ծնկաչոք մարդու սխեմատիկ պատկերները (կողային դիրքից) և Հայոց այբուբենի «զ» տառանշանը:

Սյունիքի ժայռապատկերներում ձեռքերը վեր բարձրացրած ծնկաչոք մարդ պատկերող (կողային դիրքից) նշանագրերը	V÷XVI դդ «զ» տառի գրության տարբերակները
	

Այժմ դառնանք մեր բուն խնդրին և ի մի բերելով վերն ասվածը, փորձենք ճշգրտել հիքսոսյան այբուբենի գրանշանների քանակը:

Վերը մենք հիմք ընդունեցինք Վ. Օլբրայթի աղյուսակը, որում նա հիքսոսյան այբուբենի համար առանձնացրել էր 23 գրանշան: Ապա հետևելով Ջ. Գարբինիի արտահայտած տեսակետին, կատարեցինք մի քանի գրանշանների քննություն և արդյունքում պարզեցինք, որ որոշ գրանշանների տարատեսակներ համարվող շատ գրանշաններ իրականում անկախ գրանշաններ են: Այդ վերլուծության արդյունքում ճշգրտված հիքսոսյան այբուբենի գրանշանների ցանկը բերված է աղյուսակ 25-ում: Աղյուսակում գրանշանների դասավորությունը կամայական է, քանզի դեռևս չգիտենք նրանց ճշգրիտ հնչյունական արժեքները:

Մեր առանձնացրած անկախ գրանշանների թիվը կազմեց 43, որոնցից 36-ը ներկայացված է աղյուսակում, իսկ մնացած 7-ը (Կ, Օ, Չ, Վ, Խ, Զ, Է) աղյուսակից դուրս ենք թողել: Աղյուսակի վերջին 4 և աղյուսակից դուրս մնացած 7 գրանշանները (ընդհանուրը՝ 11) արձանագրություններում հանդիպում են հազվագյուտ (մեկից երեք անգամ): Միայն լեզվի վերձանումից հետո կարելի կլինի հստակեցնել, թե 43 գրանշաններից որոնք են ունեցել հնչյունական արժեքներ և կազմել բուն այբուբենը:

Համենայն դեպս գրանշանների այս քանակը միարժեքորեն ցույց է տալիս, որ ա. հիքսոսյան այբուբենը պարունակել է լեզվի և բաղաձայն, և ձայնավոր հնչյունները, կազմվել է մեկ հնչյուն - մեկ գրանշան սկզբունքով,

բ. հիքսոսյան այբուբենի հիմքում չի կարող լինել 21÷27 հնչյուն պարունակող սեմական լեզու:

Աղյուսակ 25-ում հիքսոսյան այբուբենի գրանշաններին զուգահեռ բերված են նաև նրանց կրկնակները հայկական աղբյուրներից:

Դրանք են.


ա. **Սյունիքի ժայռապատկերներ**³⁷ - Սյունիքի ժայռապատկերները փորագրվել են վերին հին քարի դարում՝ 15÷50 հազար տարի առաջ:³⁸ Սյունիքի ժայռափոր նշանագրերով արված արձանագրությունները ներկայացնում են աշխարհի հնագույն գաղափարագիր գրային համակարգը, իսկ գաղափարագրման հիմքում դրված են

³⁷ . Գ. Կարախանյան, Պ. Սաֆյան, Սյունիքի ժայռապատկերները, Երևան, 1970; Ս. Պետրոսյան, Հայկական ժայռապատկերներ, Երևան, 2006; Հար. Մարտիրոսյան, Գեղամա լեռների ժայռապատկերները, Երևան, 1981

³⁸ . Հ. Մարտիրոսյան, Սյունիքի ժայռապատկերների թվագրումը, https://www.academia.edu/19143026/THE_DATING_OF_SYUNIK_PETROGLYPHS

հայերենի համանունները:³⁹ Սյունիքի նշանագրերը և նրանց լեզուն է դրված շումերական պատկերագրության ու հետագա սեպագրության և եգիպտական հիերոգլիֆիկ գրերի հիմքում (տես համապատասխան հավելվածները):⁴⁰ Ադյուսակ 25-ում բերված համեմատությունը ցույց է տալիս, որ հիքսոսյան այբուբենի բոլոր գրանշաններն ու նրանց տարատեսակներն առկա են Սյունիքի ժայռապատկերներում (ադյուսակից դուրս մնացած 7 գրանշանները ևս ժայռապատկերներում ունեն իրենց կրկնակները):

բ. **Քուչակի գծային գրեր**⁴¹ - Հայտնաբերվել են 1986-1987թթ Ապարանի ջրամբարի արեւմտյան ափի կենտրոնական հատվածում (Քուչակ գյուղից 3կմ հարավ-արեւելք) կատարված հետախուզական պեղումների ընթացքում: Մասնակիորեն պեղված հնավայրը բաղկացած է բլրի վրա գտնվող ամրոցից և նրա ստորոտում տարածվող դամբարանադաշտից: Ամրոցը և դամբարանադաշտը վերաբերում են Ք.ա. XVIII-XIV դդ: Ամրոցի տարածքում պեղված հետախուզական քառակուսում հայտնաբերված 4 քարերի, դամբարանադաշտում պեղված դամբարաններից երեքի կրոմլեխների և մեկի ծածկասալի վրա հայտնաբերվել են գծային գրերով արված արձանագրություններ (տես նկար ---): Քուչակի հնավայրը պատկանում է հիքսոսյան այբուբենի գործածության ժամանակաշրջանին: Քանակով քիչ և ծավալով փոքր այս արձանագրությունները պարունակում են հիքսոսյան այբուբենի գրանշանների մեծ մասը:



Նկար 20. Քուչակի գծային գրերի նմուշներ:

³⁹ . Հ. Մարտիրոսյան, Աշխարհի հնագույն գրային համակարգերը, https://www.academia.edu/12255207/%D5%80%D4%B1%D5%85%D5%88%D5%91_%D4%B1%D5%8C%D4%B1%D5%94%D4%B5%D4%BC%D4%B1%D4%BF%D4%B1%D5%86_%D5%8A%D4%B1%D5%8F%D5%84%D5%88%D5%92%D4%B9%D5%85%D5%88%D5%92%D5%86._%D4%BC%D4%B5%D4%B6%D5%88%D5%92_II_%D5%B4%D5%A1%D5%BD

⁴⁰ . Հ. Մարտիրոսյան, Շումերի ծագումը, https://www.academia.edu/33020541/ORIGIN_OF_SUMER

⁴¹ . Ֆ. Մուրադյան, Նորահայտ նշանագրեր Ապարանի շրջանից, Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում (1986-1987թթ պեղումների արդյունքները), Երևան, 1993, էջ 103

Աղյուսակ 25. Հիքսոսյան այբուբենի, Մյունիքի նշանագրերի, Քուչակի գծային գրերի և Նշանագիրք իմաստնոցի համեմատական աղյուսակ:

№	Հիքսոսյան այբուբենի գրանշաններ	Մյունիքի ժայռապատկերներ	Քուչակի գծային գրեր	Նշանագիր Իմաստնոց
1	𐤀 𐤁 𐤂 𐤃 𐤄	𐎀 𐎁 𐎂 𐎃 𐎄	-	𐎀 𐎁
2	𐤅 𐤆 𐤇 𐤈	𐎅 𐎆 𐎇 𐎈	𐎉 𐎊 𐎋	𐎌
3	𐤉 𐤊 𐤋	𐎉 𐎊	-	𐎍
4	𐤌 𐤍 𐤎 𐤏 𐤐 𐤑	𐎌 𐎍	-	𐎎
5	𐤒 𐤓	𐎒 𐎓 𐎔	-	𐎕
6	𐤔 𐤕 𐤖	𐎕 𐎖 𐎗	-	𐎘 𐎙 𐎚
7	𐤗 𐤘 𐤙 𐤚	𐎗	-	𐎛 𐎜 𐎝 𐎞
8	𐤛 𐤜	𐎛 𐎜 𐎝 𐎞 𐎟	-	𐎠 𐎡 𐎢 𐎣
9	𐤝 𐤞 𐤟	𐎟 𐎠	𐎡	𐎤 𐎥 𐎦 𐎧
10	𐤠 𐤡 𐤢	𐎠 𐎡 𐎢	-	-
11	𐤣 𐤤 𐤥	𐎣 𐎤 𐎥	𐎦 𐎧	𐎨 𐎩 𐎪 𐎫
12	𐤦 𐤧 𐤨 𐤩	𐎦 𐎧 𐎨 𐎩 𐎪 𐎫	𐎬 𐎭 𐎮 𐎯	𐎰 𐎱 𐎲 𐎳
13	𐤪 𐤫 𐤬 𐤭	𐎪 𐎫 𐎬 𐎭	𐎰 𐎱 𐎲 𐎳	𐎴 𐎵 𐎶 𐎷
14	𐤮 𐤯	𐎮 𐎯 𐎰 𐎱	𐎴 𐎵 𐎶 𐎷 𐎸 𐎹	𐎺 𐎻
15	𐤰 𐤱	𐎰 𐎱 𐎲 𐎳 𐎴 𐎵	𐎺 𐎻 𐎼 𐎽 𐎾	𐎿
16	𐤲 𐤳	𐎲 𐎳 𐎴 𐎵	𐎺 𐎻 𐎼 𐎽	𐎿 𐏀 𐏁 𐏂
17	𐤴 𐤵 𐤶 𐤷	𐎴 𐎵 𐎶 𐎷 𐎸 𐎹	-	𐏃 𐏄 𐏅
18	𐤸 𐤹 𐤺	𐎸 𐎹 𐎺	𐏃 𐏄 𐏅	𐏆 𐏇
19	𐤻 𐤼 𐤽	𐎻 𐎼 𐎽	-	-
20	𐤾 𐤿 𐏀	𐎾 𐎿 𐏀 𐏁	𐏆 𐏇 𐏈	𐏉 𐏊 𐏋 𐏌
21	𐏁 𐏂 𐏃	𐏁 𐏂 𐏃	𐏉 𐏊 𐏋	𐏍 𐏎 𐏏
22	𐏄 𐏅 𐏆	𐏄 𐏅 𐏆	-	-
23	𐏇 𐏈 𐏉	𐏇 𐏈 𐏉	𐏉 𐏊 𐏋	𐏌 𐏍 𐏎 𐏏
24	𐏊 𐏋 𐏌 𐏍	𐏊 𐏋 𐏌 𐏍	𐏌 𐏍	𐏐 𐏑
25	𐏎 𐏏 𐏐	𐏎 𐏏 𐏐	-	𐏒
26	𐏑 𐏒	𐏑 𐏒 𐏓	-	𐏔 𐏕 𐏖 𐏗
27	𐏓 𐏔	𐏓 𐏔 𐏕	-	𐏘 𐏙 𐏚 𐏛
28	𐏕 𐏖 𐏗	𐏕 𐏖 𐏗 𐏘	𐏘 𐏙 𐏚 𐏛	𐏜 𐏝
29	𐏙 𐏚	𐏙 𐏚 𐏛 𐏜	𐏜 𐏝 𐏞 𐏟 𐏠 𐏡	𐏢 𐏣 𐏤
30	𐏛 𐏜 𐏝	𐏛 𐏜 𐏝 𐏞	𐏢 𐏣	𐏦 𐏧 𐏨 𐏩
31	𐏞 𐏟 𐏠 𐏡	𐏞 𐏟 𐏠 𐏡	𐏦 𐏧 𐏨	𐏪 𐏫
32	𐏢 𐏣	𐏢 𐏣 𐏤	-	𐏬 𐏭 𐏮
33	𐏤	𐏤 𐏥 𐏦	𐏬 𐏭 𐏮 𐏯	𐏰 𐏱
34	𐏧 𐏨	𐏧 𐏨 𐏩	𐏰 𐏱 𐏲	𐏳 𐏴
35	𐏩	𐏩 𐏪	-	𐏵
36	𐏫	𐏫 𐏬 𐏭	-	𐏷 𐏸

Նույն նշանագրերի գործածման առնվազն 15 հազարամյա այս ավանդապահությունը նախ վկայում է Հայաստանում այդ գրի աստվածատուր և սրբազան լինելու ընկալման շարունակականության մասին և երկրորդ՝ այդ ողջ ժամանակահատվածում

Հայաստան մուտք գործած օտար մշակույթների ազդեցությունն այնքան թույլ էր, որ անկարող էր խզել այդ գրերի գործածման ավանդապահությունը: Հայոց մշակույթի վրա զգալի ազդեցությունները եղել են ուշ ժամանակներում (հելլենիզմ և քրիստոնեություն): Նույնիսկ քրիստոնեությունն իր ավերիչ գործունեությամբ չկարողացավ խզել Հայաստանում նշանագրերի անընդհատ գործածությունը:

Աղյուսակ 25-ի տվյալների միակ խելամիտ մեկնաբանությունն այն է, որ հիքսոսյան այբուբենի գրանշանները վերցվել են վերին հին քարի դարի Սյունիքում ձևավորված և Հայաստանում անընդհատ գործածված նշանագրերից, որոնց ընթերցումները կազմակերպված են հայերենի համանունների հիման վրա:

Սրան հավելենք հետևյալ փաստերը.

ա. Հիքսոսյան այբուբենով գրառված արձանագրություններից հնագույնները վերաբերում են Ք.ա. XVIII դ. սկզբին, ինչը համապատասխանում է հին Եգիպտոսում հիքսոսների տիրապետության հաստատման ժամանակաշրջանին:

բ. Հիքսոսյան այբուբենով գրառված արձանագրությունները հայտնաբերվել են Միջերկրական ծովի արևելյան և հարավ-արևելյան ափերին՝ Սիրիայից մինչև Եգիպտոս, ինչը նույնանում է Հայաստանից դեպի Եգիպտոս հիքսոսների արշավանքի երթուղու հետ:

գ. Հիքսոս անվանումը մեզ է հասել եգիպտական քուրմ Մանեթոնի (Ք.ա. III դ.) կորած աշխատությունից, որից միայն որոշ հատվածներ են պահպանվել այլ հեղինակների կողմից կատարած մեջբերումների տեսքով: Մանեթոնը Hyk sos անվանումը տվել է Հայաստանից (Քաջանց երկիր) դեպի Պաղեստին ու Եգիպտոս արշաված հայերին և այդ անվանումը մեկնաբանում է որպես «արքա-հովիվ, արքա-քուրմ»: Hyk sos անվանման հիմքում հայերեն ազ=«պահապան, պաշտպան, վերակացու» և սոս=«հաղթանդամ, հսկա, քաջ» արմատներն են:⁴⁴ Այս «ազ» արմատից և -որ, -որդ=«անող, կատարող» ածանցից է կազմված ազոր, ազորդ=«պահապան, վերակացու, պաշտպան» բառը: Սյունիքի ժայռապատկերներում և Հին աշխարհի գրային համակարգերում ազ=«պահապան» արմատը գաղափարագրվել կենդանու (ցուլ, առյուծ) պոչի պատկերի և նրա «ագի» անվան միջոցով:

Հին աշխարհում Պահապաններ բնութագրով հայտնի են եղել Հայկական լեռնաշխարհի բնիկները՝ Հայերը: Ուշ շրջանի աղբյուրներից Պահապաններին հիշատակում է «Հոբելյանների գիրքը»: Այնտեղ մանրամասն պատմվում է, թե ինչպես է Սեմի թոռը՝ Արփաքսաթի որդի Կայինամը (Կայինան), իր քաղաքը կառուցելու համար տեղ փնտրում: Որոնումների ընթացքում «նա գտնում է արձանագրություն, որը նախահայրերը գծագրել էին ժայռի վրա: Եւ նա կարդաց թե ինչ է գրված, թարգմանեց այն և գտավ, որ այնտեղ Պահապանների ուսուցանած գիտությունն է Արեգակի, Լուսնի և աստղերի կառքերի և երկնային նշանների մասին»:⁴⁵

Այստեղ խոսքը գնում է նախաջրհեղեղյան նախահայրերի և ժայռերի վրա նրանց փորագրած արձանագրությունների մասին: Այդ արձանագրությունների տեղի մասին տեղեկություն է հաղորդվում արդեն Ծննդոց գրքում: Այստեղ էլ ասվում է, թե Արփաքսաթի ժառանգներից Եկտանի և նրա որդիների բնակության վայրը Մասիսներից մինչև արևելյան Սոփեր լեռն էր. «Եւ եղեւ բնակութիւն նոցա ի

⁴⁴ . Հիքսոս անվան ստուգաբանման մանրամասները տես՝ Հ. Մարտիրոսյան, Հայոց հնագույն պատմության էջեր», Երևան, 2011, էջ 159

⁴⁵ . Book of Jubilees, VIII

Մասեաց մինչև ի գալ ի Սովփերա լեռնն արեւելեայց»:⁴⁶ Սովփեր (Սովփեր, Սովփար, Սովոր) լեռնանունը հիշատակվում է միայն Ծննդոց գրքում:

Լեռնանունը կազմված է սեմական ծագումով «սովփեր» բառից, որն ունի «գիր, գրություն» իմաստ (ասորերեն *sefrā* = «գրություն, գիրք», *sāfrā*=«գրող», եբրայերեն *spr*, *sfr* = «պատմել, հաշվել, գրել», *sōfēr* = «գրող», արամերեն *sāfrā* = «գրող», արաբերեն *sifr* = «գիրք» և այլն): Ուստի Սովփեր լեռ անվանումը տառացի նշանակում է «գրերի լեռ»: Իսկ Մասիսներից արեւելք գտնվող Գրերի լեռը պատմական Սյունիքի լեռնաշխարհն է իր հազարավոր ժայռափոր արձանագրություններով, որոնք այսօր հայտնի են ժայռապատկերներ անվանումով: Ակնհայտ է, որ հենց այստեղ է Կայինամը հայտնաբերել Պահապանների գրերը:

Հորեյանների գրքի և Ծննդոց գրքի տվյալները վկայում են, որ առնվազն Պաղեստինում և Միջագետքում (հայտնի է, որ Ծննդոց գրքի սկզբնաղբյուրները միջագետքյան են) գիտեին Հայաստանի ժայռափոր գրերի գոյության մասին ու նաև գիտեին, որ դրանք գրի են առնվել նախաջրհեղեղյան նահապետների կողմից:



Նկար 22. Սովփեր=Գրերի լեռն ըստ Հորեյանների գրքի:

Նախաջրհեղեղյան Պահապանների այս գրերից (Սյունիքի ժայռապատկերների նշանագրերից) ստեղծելով իրենց այբուբենը, Ք.ա. XVIII դարում Սոս Ագորդները= «քաջ պահապանները» (=Hyk sos) իրենց հետ տանում են Միջերկրական ծովի արեւելյան ափերը և Եգիպտոս:

Ահա այս փաստերի վրա հիմնվելով է, որ եզրակացնում ենք, թե հիքսոսյան այբուբենի լեզուն հայերենն է: Եթե հիքսոսյան գիրն այբուբենական է, ստեղծվել է մեկ հնչյուն-մեկ գրանշան սկզբունքով, ապա այն պիտի պարունակի 36 գրանշան, քանզի հայերենն աշխարհի միակ լեզուն է, որն ունի 36 հնչյուն: Այս տրամաբանությանը հետևելով է, որ աղյուսակ 25-ում առանձնացրինք 36 գրանշան:

Այս դեպքում հարց է ծագում, թե ինչ դեր են կատարել հավելյալ (մեր դեպքում 7) գրանշանները: Հավելյալ գրանշանների առկայությունը կարող է ունենալ երկու բացատրություն.

ա. Այբուբենի ստեղծման ու գործածության սկզբնական փուլում տարբեր հեղինակների կողմից միևնույն հնչյունի համար կարող էին գործածվել տարբեր գրանշաններ:


բ. Հիքսոսյան այբուբենական գիրը կարող էր պարունակել տարբեր իմաստներ («արքա», «երկիր», «աստված», «մարդ» և այլն) կրող գաղափարագիր ցուցիչներ:

⁴⁶ . Ծննդոց Ժ, 30

Գաղափարա-վանկագիր գրերին (սեպագրություն, հիերոգլիֆներ) զուգահեռ գործածվող այբուբենական գրում նման ցուցիչների առկայությունը հավանաբար ինչ որ տեղ անհրաժեշտություն էր: Մանավանդ, որ այդ ցուցիչների գործածությունը տեսնում ենք հիքսոսյանից մոտ 1000 տարի ավելի ուշ գործածված արեմենյան սեպագիր այբուբենում: Այս այբուբենում հնչյունական գրանշաններից բացի գործածվել է 6 ցուցիչ: Հիքսոսյան այբուբենի հավելյալ գրանշանների գոյության այս մեկնաբանությունը համարում ենք ավելի հավանական, իսկ խնդիրը վերջնական կպարզվի այբուբենի վերծանումից հետո:

Որպես այբուբենի վերծանման առաջին և կարևոր քայլ, պարզեցինք նրա լեզուն (հայերեն) և հնչյունների/գրանշանների քանակը (36): Հաջորդ քայլը պիտի լինի պարզել, թե արձանագրություններում վկայված որ գրանշաններն են բուն այբուբենական և կազմել 36 գրանշանների ճշգրիտ ցանկը և առանձնացնել հավելյալ գրանշանները:

Այս խնդիրը լուծելու համար հարկ է հաղթահարել մի ավելի դժվարին խոչընդոտ: Հիքսոսյան արձանագրությունների զգալի մասը մաշվածության պատճառով դժվար ընթեռնելի են, ինչն էլ խոչընդոտում է արձանագրություններում առկա գրանշանների ճշգրիտ ցուցակ կազմելուն, գրանշաններից յուրաքանչյուրի գործածության հաճախությունը որոշելուն: Այս խնդիրը միշտ կանգնած է եղել հիքսոսյան արձանագրությունները հետազոտողների առաջ: Բ. Սասսն իր աշխատության մեջ խնդիրը ներկայացնում ու լուսաբանում է հետևյալ համեմատությամբ (տես նկար 23):



Նկար 23. Մինայում հայտնաբերված №349 արձանագրությունը. ա) Ֆ. Պետրիի լուսանկարը, բ) Վ. Օլբրայթի ընթերցումը և երկրորդ շարքում Հ. Գրիմմեի ընթերցումները համապատասխանաբար 1923, 1929 և 1937 թվականներին:⁴⁷

⁴⁷ . B. Sass, The Genesis of the Alphabet and its Development in the Second Millennium B.C., Otto Harrassowitz-Wiesbaden, 1988, fig. 27, 28, 29

Նկարում բերված նմուշները ցույց են տալիս, որ նույն արձանագրության նշանների ձևերն ու նրանց քանակը զգալի տարբերվում են ոչ միայն տարբեր հետազոտողների արտանկարած գծային տարբերակներում, այլ նաև նույն հեղինակի կողմից տարբեր ժամանակներում գծագրած տարբերակներում: Այս փաստը խիստ դժվարեցնում է հիքստայան այբուբենի գրանշանների ճշգրիտ թիվն ու գծագրությունը վերականգնելը: